ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1991

ԳՄԴ 84Հ1
Ն 631

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐԱԾԵՑ
ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԸ

Խմբագիրներ՝ ԱՂԱՍ ԲՈՂՈՅԱՆ,
ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍ

Ն 631 Ներսես Շնորհալի: «Հիսուս որդի»: Վիպասանական ոդեբերգություն: [Գրաբարից թարգմ. Վ. Ղազարյանը.— Երևան: Ապոլոն, 1991.—224 էջ:

Միջնադարյան մեծ բանաստեղծ Ներսես Շնորհալու «Հիսուս որդի» պոեմը հայ մշակույթի գագաթներից է: Այն վիթխարի ազդեցություն է թողել մեր հետագա ողջ բանաստեղծության վրա: Աշխարհաբար թարգմանվում է առաջին անգամ: Գիրքն ընդգրկում է նաև գրաբար ճշգրտված տեքստը:

Շապիկին՝ Սկիճի նածկոց, 1862թ.:

ԳՄԴ 84Հ1

Ն 4702080102( )
749 (01) 1991

ISBN 5-8079-0313-7

© Երևան, «Ապոլոն», 1991
Թարգմանության և ձևավորման համար

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ՀԻՍՈՒՍ ՈՐԴԻ

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼՈՅ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ
Ի ՏԱՌԻՑ ՍՐԲՈՑ

ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ Է
ՀԻՍՈՒՍ ՈՐԴԻ
ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ
ԸՍՏ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ·

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ԻՐ «ՀԻՍՈՒՍ ՈՐԴԻՆ»

Հայ մշակույթը, հատկապես քերթությունը և արվեստը Ժ—ԺԳ դարերում համեմատելի է միայն Ե—Ը դարերի մշակույթի հետ: Ոսկեդարյան դպրություն, ոսկեդեղնիկ լեզու համարվում են Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց ավագ ու կրտսեր աշակերտների ստեղծած մատենագրությունը և նրանց աստվածային լեզուն: Մեսրոպ Մաշտոցից մինչև Մովսես Խորենացի թարգմանության, աստվածաբանության հայկազյան լեզուն հնչում է իր ողջ մաքրությամբ, հղկվածությամբ և անհաս մի գեղեցկությամբ, որ դարեդար ավելի հմայիչ է դառնում: Պակաս գեղեցիկ չէ նաև զանազան ոճերով հարստացված Ժ դարի հեղինակներ Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Գրիգոր Նարեկացու լեզուն: ԺԱ դարից փոխվում է հայ ժողովրդի համար քաղաքական և մշակութային իրականությունը:

1021 թ. Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագավորը իր 200 000 մարդկանցով թողնում է հայրենիքը և տեղափոխվում Կապադովկիա և նախկին Փոքր Հայք՝ Սեբաստիա: Փոքր Հայքը, որ Ք.ծ.ա Բ դարից բաժանվել էր Հայաստանից և աստիճանաբար հայաթափ էր եղել (կամ հայերն էին դարձել հունախոս), նորից աշխույժ հայկական կյանք է ստանում, մանավանդ երբ այնտեղ Կապադովկիայի և Կիլիկիայի սահմանին մերձ Ծամնդավ է տեղափոխվում Կարսի Գագիկ թագավորը: 1045-ին Անիի Գագիկ Բ թագավորը հրավիրվում է Կոստանդնուպոլիս և ակամա դառնում Կոստանդին Մոնոմախ կայսեր պատանդը, ավելի ուշ վտարանդվելով Կիլիկիա:

Ճակատագրի քմահաճույքով Պահլավունիները (ավանդաբար Արշակունիներից սերող այս տոհմը) դառնում են Բագրատունիների (Արշակունի արքաների թագադիր ասպետների) գահի պահպաններ, ապա նաև ոստանի վերջին հզոր պաշտպանները: 1064-ին Ալփ-Արսլանի սելջուկյան վիթխարի ուժերի առջև Պահլավունիները չեն կարողանում պահել հազար ու մի եկեղեցիների քաղաք Անին: Բյուզանդական անհեռատես քաղաքականության պատճառով Հայաստանը զրկվել էր իր ամենակենսունակ ուժերից, որոնք հեռացվելով հայրենիքից՝ եռանդով կենսական տարածություններ էին ստեղծում Կիլիկիայում, Հյուսիսային Սաորիքում, Կապադովկիայում, Փոքր Հայքում: Իսկ մինչ այդ Բագրատունյաց թագի պաշտպան Վահրամ Պահլավունու եղբորորդին՝ Գրիգոր Մագիստրոսը, հույսը կտրած Բագրատունյաց արքաների վերադարձից, հանձնում է իր Բջնիի, Կայենի և Կայծոնի հայկական կալվածքները՝ զինվորագրվելով բյուզանդական բանակին:

Բայց մինչև Գրիգոր Մագիստրոսը, ԺԱ դարի այդ առեղծվածային հանճարը, հայկական ուսումնական հեգնանքի այդ տխուր ասպետը, որին կարող է նախանձել նույնիսկ մեր դարի ինտելեկտուալը, հայ և բյուզանդական բանակների այդ երկսայրի սուրը, թոնդրակյան շարժման այդ սառնասիրտ դահիճը, շարժում, որին հար և նման գործունեությունը թարմ շունչ հազորդեց արևմտյան աշխարհին՝ հանձինս բոգոմիլների և Ռեֆորմացիայի մարտիկների, դառնանք բյուզանդական «հայազգի» կայսրերին:

Ովքեր էին նրանք, այդ «շուռ տված» հայերը, այդ կասկածելի ինքնակոչ «Արշակունիները», Նոր Հռոմի նոր հավակնորդները, որոնք վերջնականապես հին Հռոմը ոխերիմ դարձրեցին իրենց՝ գրգռելով նրա անհագուրդ ախորժակը իրենց փարթամությամբ: Երանի նրանց գործունեությունը սահմանափակվեր միայն իրենց սահմանների պաշտպանության հոգսերով և հելլենական կրթության ու հայրաբանական մատենագրության վերածնումով, ճոխ մատենադարանների ստեղծումով, իտալական Վերածնությունը հիշեցնող այնպիսի բազմակողմանի ուսումնականներով, ինչպիսիք էին Փոտը, Լևոն Մաթեմատիկոսը, Միքայել Պսելլոսը, Միքայել Իտալիկոսը: Բայց նրանք թերևս կամենում էին աշխարհը հավաքել կայսեր գայլասոնի տակ, դառնալ նոր Կոստանդիններ, իդեալական քրիստոնյա աշխարհակալներ, դժբախտաբար գործադրելով ոչ քրիստոնեական և ոչ հեռատես միջոցներ: Արևելյան սահմանները մաքրվեցին «անհարազատ» համարված հայերից և նրանց անունը կրող զորաբանակից (Արմենիակոն թեմի), հայոց հողը մաքրվեց իր հզորազոր նախարարներից, մեծ ու փոքր արքաներից, թյուրք-սելջուկներն անցան ամբողջ Պարսկաստանը, քանդեցին արաբական ամիրայությունները և խրվեցին Բյուզանդիայի սիրտը՝ Փոքր Ասիայում հիմնելով Իկոնիայի սուլթանությունը՝ Բյուզանդական կայսրության այդ մահացու խոցը. խաչակիրները Բյուզանդիան դարձրին ոտքի ու ձիերի ճանապարհ, դեպի Փոքր Հայք, Կապադովկիա և Կիլիկիա տեղափոխված հայ արքաների ու իշխանների սերունդները Միջերկրականի հյուսիս-արևելյան ծովեզերքը վերածեցին մի նոր հզոր Հայաստանի, որը շուրջ երեք դար դիմացավ աշխարհասասան փոթորիկներին: Վասիլ Բ կայսեր խորամանկ և փայլուն, անարյուն իրագործված ծրագիրը՝ Հայաստանը զրկել նախարարական տներից, ուղղվեց իր՝ Բյուզանդիայի դեմ, նրան հաջորդած թուլամորթ կայսրերի դեմ, որոնք չունեին ոչ հայազգի կայսեր հզոր բանակը, ոչ էլ նրա անսպառ եռանդը: Մերձավոր Արևելքը դարձավ պատերազմների թատերաբեմ և այլազան մշակույթների խառնարան, որտեղ կգտնեիք հույն և ասորի անապատականների, հայ սքեմավորների, ֆրանկ, գերմանացի և անգլիացի ասպետների, տրուբադուրների ու ֆրանցիսկյան-դոմինիկյան կրոնավորների, արաբ ու պարսիկ, ավելի ուշ՝ սելջուկ դերվիշների և ուսումնականների, որոնք վխտում էին Իսպանիայից մինչև Հնդկաստան, զինված հայ, հույն և իտալացի, արաբ և հրեա վաճառականների, որոնց համար սովորական էր ստրկավաճառությունը: Արդեն նեղ էին գալիս ներփակ ազգային դարձած քրիստոնեական ոլորտները, նեղվում էր ոսկեղենիկ հայերենը հին պատյանի մեջ: Նա մնում էր կատարյալ թերևս աստվածաբանության համար:

Բայց քերթության, հոմերական վիպերգության, բժշկագիտության, մարդու կազմախոսության, ուղղագրության, գրչության արվեստի, վերջապես՝ հայհոյանքների, կենդանի աղոթքների, գործնական հաշիվների, աշխարհիկ նոր օրենքների լեզուն: Հոգևոր հովիվների հսկողությունից դուրս էր մնում հոտը՝ անջատված մահմեդական և ոչ մահմեդական անվերջ փոփոխվող իշխանություններով: Հայ ազգը նոսրանում էր մայր հայրենիքում, տարածվում դեպի Ասորիք, Կիլիկիա, Փոքր Հայք, Բարձր Հայք: Անիի ընկնելուց հետո միայն մեկ կաթողիկոս՝ Պետրոս Գետադարձի հաջորդ, կաթողիկոսի տեղապահ Խաչիկը մի փոքր մնաց ավերված Անիում:

Արդեն Կոստանդին Մոնոմախ կայսեր միջամտությամբ ընտրված Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Գրիգոր մեծ Վկայասեր կաթողիկոսը իր ապաստանը գտավ

Հեռավոր Քեսունի մոտ՝ Գող Վասիլի տրամադրած Կարմիր վանքում: Կաթողիկոսի հայրը՝ Գրիգոր Մագիստրոսը, նույնահանգ բանաստեղծության սկիզբ դրեց իր նշանավոր «Հազարտողյանով»: 1045-ին Գրիգոր Պահլավունին Կոստանդնուպոլսում հանդիպեց մահմեդական ուսումնականներից մեկին՝ Մանուչեհին, որ էր «այր յոյժ հմուտ իսմայէլական դպրութեան, և ամենայն իմաստութեամբ պերճացեալ, և վարժեալ ի տաղասացութիւնս և հռետորութիւնս, և ի բանաստեղծութիւնս հզօր գոլով», հռչակված Բաղդադում, Եգիպտոսում, Բյուզանդական կայսրից ստացած բարձր պատիվներ: Սա պնդում է Կորանի առավելությունը Աստվածաշնչից, որովհետև Մահմեդը «զայսոսիկ ոգեաց տաղս միայետ չափաւորութեամբ գծի», այսինքն՝ ոտանավորով: Չորս օրում Մագիստրոսը գրում է Աստվածաշնչի բովանդակությունը հազար տողի մեջ և դրանով «ապացուցում» Աստվածաշնչի առավելությունը: Մագիստրոսը, որն իրեն կոչում էր «Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արձիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր և Մոնոմախին մագիստրոս, վէստ և դուկ Խարբի», այսպիսով առաջին վկայողն է, թերևս իրագործողը նույնահանգ բանաստեղծության, հյուսված արաբականի նմանությամբ: Այս ամենի մասին ստույգ աղբյուրներով հավաստում է բանասեր Կ. Կոստանյանը (տես «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղեքսանդրապօլ, 1910, էջ ԽԱ-ԽԳ): Մագիստրոսը մնում էր դեռևս քառաշեշտ բանաստողի սահմաններում, որ իր հնչողությամբ մոտ էր շարականների ոտանավորին: Առնվազն մեկ դար պետք է անցներ, որ Պահլավունիների տոհմից մայրական գծով ծնվեր մեկ այլ քերթող, որն իր մեծ պապի մի հարվածով ստեղծած «թեթևսուլիկ» հանգախաղը հղկեր, տար նրան կենդանի շունչ, փոխելով նաև առհասարակ հնավանդ ոտանավորը: Այդ քերթողը Ներսես Շնորհալին էր:

Այս Պահլավունիները, որոնց երկրորդ լուսավորիչ էին կոչում, ծագում էին Անիի Ապուղամրենց տոհմից, որը Անիում կառուցել է մի շարք եկեղեցիներ, որոնցից մի քանիսը կան մինչև օրս, թողել բազմաթիվ վիմական հիշատակներ, բերդեր, նույնիսկ քաղաքներ: Այդ տոհմն իրեն համարում էր Կամսարականների շառավիղ, որոնց հետքը կորել էր Ը դարի խորքերում: Իսկ Կամսարականները մայրական գծով գալիս էին Պարթևների կամ Պահլավների (Գրիգոր Լուսավորչի) ցեղից: Գրիգոր Մագիստրոսի նման կիրթ անձնավորության համար դժվար չէր իր տոհմին անուն գտնել, որը քիչ դեր չխաղաց ցիրուցան հայ ժողովրդի հավատքը և միությունը պահպանելու գործում մինչև Գրիգոր Տղա և Ներսես Լամբրոնացի: Եվ, իհարկե, նրանց շարքում թերևս առաջին տեղը պատկանում էր Ներսես Շնորհալուն, որն իր նշանավոր «Թուղթ ընդհանրականով» կարողացավ ի մի բերել ցիրուցան հայ հոգևոր և ազգային ուժերը:

Ներսեսը ծնվել է 1102-ին Ծովք դղյակում, որի տերն իր հայրն էր՝ Ապիրատ մեծ իշխանը: Նա ուներ երեք եղբայր և մեկ քույր: Եղբայրներից Գրիգորը և Ներսեսը հանձնվում են Գրիգոր մեծ Վկայասեր կաթողիկոսի խնամքին: 1105-ին, վերջինիս մահից հետո երեխաների խնամքն ստանձնում է Բարսեղ կաթողիկոսը: Սկզբում նրանք գտնվում էին Քեսունի մոտի Շուղր անապատում: Բարսեղ կաթողիկոսը երեխաների խնամքը հանձնում է Կարմիր վանքի առաջնորդ Ստեփանոս Մանուկին: Այստեղ են ուսանում հայ մատենագրության նշանավոր ներկայացուցիչներ Սարգիս Շնորհալին, Իգնատիոսը, Բարսեղ Շնորհալին: Ինչպես երևում է, Շնորհալին պատվանուն էր Շուղրի և Կարմիր վանքերում:

1150-ին, երբ կաթողիկոս էր Ներսեսի եղբայր Գրիգոր փոքր Վկայասերը, կաթողիկոսական աթոռը տեղափոխվում է նոր գնված հունական բերդը՝ Հռոմկլա,

Եփրատի աջ ափին, Եդեսիայից արևմուտք, Այնթապից հյուսիս-արևելք: Ներսեսը 1166-ին, եղբոր մահից հետո, դառնում է կաթողիկոս: Նա կաթողիկոս եղբոր պատվերով գրել է մի շարք գործեր, այդ թվում և «Հիսուս Որդի» վիպասանական ողբերգությունը (1152 թ.):

Դեռ 21-ամյա Շնորհալին, երբ գրում էր իր հանճարեղ հոմերական վիպասանությունը («Սակս Հայկազեանց սեռի և Արշակունեաց զարմի»), բողոքում էր իր թերուսության համար «յիմաստ բանի, վասն անկատար հասակի», ափսոսում, որ չի կրթվել Աթենքի վարժարաններում, Պլատոնի լսարանում, չի վարժվել հոմերական չափին, չի աշակերտել հռետորների և քերականների հույլին: Հավանաբար երիտասարդ քերթողին ոգեշնչում էին Մաշտոցի և Սահակի, Մովսես Խորենացու և Դավթի, Ստեփանոս Սյունեցու, իր մեծ պապ Գրիգոր Մագիստրոսի կերպարները, որոնք իրոք ներհմուտ էին հելլենական կրթության՝ իրենց գիտելիքներն ստացած լինելով կաստալյան առաջին աղբյուրներից:

Իսկ եթե Շնորհալին դիմեր հոմերոսյան չափ ու կշռույթին, ապա դժվար թե կյանքի կոչեր «հոմերական վիպասանության» հայկական այն տարբերակը, որն սկսվեց հայկազյան սեռին ու արշակունյաց զարմերին նվիրված իր քերթությամբ, և որը իբրև հոմերական վիպասանություն ընկալեց իր կրտսեր զարմիկը՝ Ներսես Լամբրոնացին՝ ներհմուտ մի անձ հելլենական կրթության:

Այդ վիպասանության հետ «Ողբ Եդեսիոն» և «Հիսուս Որդին» բավական կլինեին Շնորհալու համար տեղ ապահովելու հայ քերթության հանճարների Պառնասում: Ութվանկնի (ինչպես Ալիշանն է ասում՝ ութոտքանի) հիմնականում նույնահանգ այդ ոտանավորը ամբողջ միջնադարում ուղեկցեց հայ քերթությանը: Այն մեր հասուն և ուշ միջնադարյան քերթության համար նույնն է, ինչ տերցիններ-ը Դանտեի կամ օկտավները Արիոստոյի ու Բայրոնի համար: Դա անվերջ հոսող ոտանավոր է, որ ծառայում է վիպական պատմություններին, ողբերգություններին, ներբողյաններին, որտեղ քերթողը պատմական կամ աստվածաշնչյան պատումներին կարող է հյուսել սեփական ապրումները և վերապրումները՝ համապատասխան Սուրբ Գրոց դեպքերի և անձանց, բողոքել իր կորուստների համար, բանաստեղծական մատչելի տեսք տալ աստվածաբանական ու իմաստասիրական մտքի ամենաբարդ ու վերացական հասկացություններին, դրանք այնպես ներհյուսել, որ ամեն մի քերթողական հատվածում միմյանց արձագանքեն մի քանի ձայնեղանակների նման (ինչպես նշում է Շնորհալու երաժշտական արվեստի գիտակ Ն. Թահմիզյանը, «Հիսուս Որդին» ասերգի ձևով պատմվել է և տեղ-տեղ երգվել):

Այս չափով են գրվել Հենց իրեն՝ Շնորհալուն, Ներսես Լամբրոնացուն, Գևորգ Սկևռացուն ձոնված ներբողները, Ֆրիկի շատ քերթվածներ, բազմաթիվ հիշատակարաններ (Սմբատ Գունդստաբլի, Սարգիս Պիծակի, «Սկևռայի պահարանի» և այլն), Ռուբինյանց տանը նվիրված Վահրամ Րաբունու վեպը: Այս չափով գրված երկարաշունչ ոտանավորները հիշեցնում են անվերջանալի հյուսվածքազարդեր, որոնք ներսում ընդգրկում են խաչի զանազան պատկերներ, զարդարելով մեր ձեռագրերը, եկեղեցիները, խաչքարերը, հյուսվածքազարդեր, որոնցով այնքան հարուստ է ողջ քրիստոնեական արվեստը Հայաստանից մինչև Եգիպտոս և Իռլանդիա:

Այս չափով ինչ ասես, որ չեն ներկայացնում մեր քերթողները՝ էլ ականատեսի վկայություններ, էլ շքեղ առարկաների նկարագրություններ, էլ իրենց ուսուցիչների վարքն ու գործը, էլ մեսրոպյան այբուբենի ոլորազարդ գովաբանություններ, էլ հեքիաթային անցուդարձեր: Միջնադարում այսքան հարուստ ու ճկուն երանգա-

պնակ թերևս չունի նույնիսկ հայրենի չափը, որի գագաթները Նարեկացու և Քուչակի տաղերն են, ներքողական վսեմ խորհրդապաշտական և քնարական մտերմիկ, աշխարհական այդ գլուխգործոցները:

«Հիսուս Որդի» վիպասանության հիշատակարանը ևս մի քանի մոտիվների սերտաճման փայլուն օրինակ է: Իհարկե,դրանց տեքստային շերտերի արտահայտության ուսումնասիրությունը բանասերների գործն է: Մենք կփորձենք միայն ուրվագծել այդ մոտիվները: Հիշատակարանի սկիզբը «Հիսուս Որդու» գրման տարեթիվն է և նրա արտաքին բնութագրումը (տների թիվը), ապա նյութը (սկսած նախաստեղծ հորից՝ Ադամից, մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը և Սուրբ Հոգու վերջին ընկալողները՝ ներկայացված դիմառնական ձևով, այսինքն դրանց հետ անձի հարաբերակցությամբ): Այնուհետև այդ նյութի աստվածաբանական ներգործությունն է (հար և նման Սուրբ Գրքի ներգործությանը), որն աշխարհիկ միտքը (ծովի պատկերով) հրի նման կարող է վեր բարձրացնել դեպի անմարմնական գունդը՝ երկնային դասերը: Ոտանավորն իր ընդգրկած սրբազան ուժի շնորհիվ ստանում է Սուրբ Գրքի ուժը (Սուրբ Հոգին) և Աստծո սերը տենչացողներին օգնում վեր սլանալու՝ հոդվելու Քրիստոսին:

Այնուհետև գալիս է քերթողի եղբոր՝ Գրիգոր կաթողիկոսի գովերգումը և իր սեփական անձի փնովումը: Հաջորդ քայլը աստվածաշնչյան խոսքի չափաբերումի հիմնավորումն է (անսպասելի իբրև մոտիվ), այսինքն բացատրումը, որ եթե արտաքին (այսինքն հելլենական, ափրոդիտյան) բանաստեղծությունը չափով գեղեցիկ է դառնում, ապա որքան ավելի կվայելչանա հոգևոր խոսքը: Դրանից հետևող մոտիվը խոսքի տարբեր շնորհների արտացոլումն է, որոնցից մեկն էլ ոտանավոր ձև տալու արվեստն է, որին տիրապետում է բանաստեղծը: Վերջում քերթողը հիշատակում է իրեն հարազատ մարդկանց անունները՝ իր եղբայրներ Գրիգոր կաթողիկոսի, Վասիլ իշխանի, Զորավարի, Մարեմ ճգնավոր քրոջ՝ վերջինիս հանգուցյալ զավակի հետ՝ նրանց կյանքի փրկության արձան համարելով իր քերթվածը:

Անշուշտ, Ներսես Շնորհալու վիպասանություններից հետո գրվեցին բազմապիսի ու բազմաբովանդակ վիպասանություններ, բազմաթիվ գյուտերով, նորամուծություններով, տաղանդի այս կամ այն աստիճանով (Գրիգոր Տղա, Վահրամ Րաբունի, Սիմեոն Ապարանցի, Առաքել Սյունեցի և ուրիշներ), սակայն նրանց բոլորի համար էլ իբրև ոսկե էտալոն, իբրև բարձրագույն չափանիշ մնում են Շնորհալու վիպասանությունները:

Ընդ Աստուծոյ դեմ յանդիման
Խօսակցելով անձ անարժան:

Հակադրության այսպիսի համարձակության օրինակ միայն կարող էր տալ Նարեկացին: Ինչպես նկատում է Նարեկացու «Մատյանի» և «Հիսուս Որդու» Ֆրանսերենի թարգմանիչ Սահակ Քեշիշյանը, ողջ պոեմը հիմնված է տրամախոսության վրա (այսինքն դրամատիկ է), իսկ տրամախոսությունը հիմնված է հակադրությունների վրա: Բայց այդ տրամախոսությունը չի ստացվի, եթե չլինի երրորդ անձը, որը գործում է առաջին պլանի անձանց թիկունքում. նա հանդես է գալիս աստանայի, այսի, օձի, առաջին մարդասպանի, բռնավորի, մահաստեղծի, լեգեոնի և վերջապես չարի տեսքով: Եվ Ներսեսի բոլոր դժբախտությունները, պարտությունները, անկումները, հիվանդությունները առաջանում են այդ անձի դեմ մղած անհավասար պատերազմում: Եվ միայն Հիսուսի՝ Հոր Միածնի դաշինքը

նրան կարող է փրկել այդ ամենից՝ մեղքերից, ծուղակներից, անկումներից, ախտերից, կտտանքներից, բանտից, աքսորից, խավարից: Ներսեսը այն բոլոր վրիպումներն է թույլ տալիս, ինչ Սուրբ Գրքի հին և նոր կտակարանային հերոսները՝ սկսած Ադամից: Բայց նրանք, հին կտակարանային անձինքը, թույլ էին, նրանք մահակիր էին, նրանք մարմին էին, բայց և հաղթեցին չարին — Ադամը, Մովսեսը, Դավիթը, Սողոմոնը, Եզեկիան և ուրիշներ: Իսկ ինքը՝ ավազանով մկրտված, Հիսուսի հոգին ստացած, իր իսկ կրոնական հովվապետի կոչումով ուրիշներին դարձի բերողը մերկ և անօգնական է չարի առջև: Փրկչի լույսն ստացածի և այն չպահողի պատիժը ահավոր է: Բայց ելքը կա՝ մաքսավորի խնդրանքը, աղոթքը մինչև մահ, որ թերևս փրկի մինչև դժոխք իջնելը սատանայի ձեռքով:

Իհարկե, եթե փորձենք գտնել որևէ ստեղծագործություն, որից մեկնել է Շնորհալին, դա Նարեկացու «Մատյանն» է: Այդ երկու քերթողների նմանությունների և տարբերությունների մասին դժվար է ավելին ասել, քան հայր Ալիշանը և Մանուկ Աբեղյանը: Տարբեր են թե նրանց լեզվամտածողությունը, թե տաղաչափությունը, թե խառնվածքները, թե խորհրդապաշտության տեսակները, թե Աստծու հետ խոսելու եղանակը: «Հիսուս Որդին» նոր տեսակի հայկաբանություն է՝ բարձրաճաշակ, մարդամոտ, գրեթե խոսակցական, քերականական և բառակազմական պարզ ձևերով:

Այդ երկու գործն էլ աստվածային են համարել թե հայերը, թե օտարները: Ուստի զարմանալի չէ, որ սկսած 1643-ից մինչև 1928 թ. «Հիսուս Որդին» տպագրվել է 13 անգամ (1643, 1660, 1660, 1686, 1702, 1724, 1746, 1746, 1785, 1792, 1824, 1830, 1928 թթ.), անգլերեն թարգմանվել 1947-ին (Jesus, Son only-begotten of the Father, a Prayer by Nerses the Grace-filled, Armenian Catholicos, 1100-1179, rendered into English by Jane S.Wingate. The Delphic Press, New York), իսկ ֆրանսերեն 1973-ին (Nersès Snorhali. Jesus fils unique du Père. Introduction, traduction de l'arménien et notes par Isaac Kechichian. L'edition du Cerf. Paris 1973) «Քրիստոնեական աղբյուրներ» մատենաշարով:

Դժբախտաբար չենք տեսել անգլերեն թարգմանությունը: Ֆրանսերեն թարգմանությունը անհանգ է, չի չափաբերված, բայց պահպանված է բանաստեղծական-դրամատիկ շնչառությունը: Նրանում օգտագործված են ԺԹ—ԺԴ դարերի երեք ընտիր ձեռագրեր, որոնց տարընթերցումները ևս տրված են թարգմանաբար:

Մեր կազմած բնագրի և թարգմանության համար հիմք ծառայել է Սանկտ Պետերբուրգի 1785-ի հրատարակությունը («Գիրք որ կոչի Ցիսուս Որդի. Արարեալ և շարադրեցեալ ի Ներսիսէ Կլայեցւոյ յոգներախտ հայրապետէ յեղբօրէ Գրիգորիսի Վկայասիրի հայոց կաթողիկոսի»), որը համեմատվել է Կոստանդնուպոլսի 1824 թ. («Գիրք որ կոչի Ցիսուս Որդի, շարադրեալ ներչափական բանիւք ի մերս Շնորհալի հայրապետէ ի Ներսիսէ Կլայեցւոյ») և Վենետիկի 1928 թ. («Տն. Ներսէսի Շնորհալւոյ հայոց կաթողիկոսի Բանք չափաւ») հրատարակությունների հետ: Ընդ որում բուն վիպերգության ենթավերնագիրը («Տեառն Ներսիսի Կլաեցւոյ ասացեալ բան մխիթարական յաղագս մանկանց...») հաճախ է դրվում տպագիր հրատարակություններում:

Այս ութվանկանի ոտանավորում գլխավոր շեշտերն ընկնում են 4-րդ և 8-րդ վանկերի վրա: Ըստ Մ. Աբեղյանի, սա մեր ամենահնչուն ոտանավորներից է, որ ռիթմական լայն հնարավորություններ ունի: Թարգմանելիս ըստ ամենայնի աշխա-

տել եմ պահպանել և ութվանկանի չափը, և միակերպ հանգավորումը: Սակայն նոր և հին բարբառների քերականական տարբերությունների պատճառով (հոլովում, խոնարհում, շարահյուսում) հնարավոր չեղավ կատարելապես ապահովել հանգի միակերպությունը նույնիսկ մեկ էջի սահմաններում: Ուստի երբեմն ներմուծել եմ ավելի հարուստ հանգային համակարգ, որ դեմ չէր իր իսկ՝ Շնորհալու բանարվեստի տեսությանը (նա խորհուրդ էր տալիս երբեմն հանգը փոխել, որ ընթերցողը չձանձրանա): Մյուս կողմից ռիթմական տեսակետից երբեմն կատարել ենք մեղանչումներ, որ հատուկ չէ արևելահայ ոտանավորին. ա) երբեմն շեշտն ընկնում է 3-րդ կամ 5-րդ վանկի վրա. բ) երբեմն անտեսել ենք Ը ձայնավորով արտահայտվող թույլ վանկերը. գ) շատ հազվադեպ ստացվել են հավելավանկեր:

«Հիսուս Որդի» վիպասանությունը լույս է տեսնում առաջին անգամ բնագրով և զուգադիր աշխարհաբար թարգմանությամբ: Դա թարգմանչի համար մեծ փորձություն է, մանավանդ բանաստեղծության թարգմանչի, որ ավելի մեծ շեղումներ է թույլ տալիս, քան արձակի թարգմանիչը: Միաժամանակ բնագրի կողքին ավելի ցայտուն են երևում թերությունները: Հուսով ենք, որ ընթերցողը ներողամիտ կլինի:

Միաժամանակ մեր խոր շնորհակալությունն ենք հայտնում պատմական գիտությունների թեկնածու Ազատ Բոզոյանին, որն հանձն առավ Սանկտ Պետերբուրգի 1785-ի հրատարակությունը Կ. Պոլսի 1824-ի ավելի ճշգրիտ թվացող հրատարակության հետ համեմատելու դժվար խնդիրը, և նրա բազմաթիվ դիտողությունների և բնագրագիտական ճշտումների շնորհիվ շահեցին և բնագիրը, և թարգմանությունը: Հիշատակարանը համեմատվել է Մատենադարանի № 4207 ձեռագրի հետ, գրված 1284 թ. Ադանայում:

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԽԻ ԿԱՅԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ ԲԱՆ ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ՅԱՂԱԳՍ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՈՐՔ ՕՐՀՆԵՆ ՋԱՆՏՒՆՆ ՅԻՍՈՒԽԻ ՄԻՉՏ ԵՐԳՈՎ ՔԱՂՑՐՈՒԹԵԱՆ

Յիսուս Որդի, Հօր Միածին,
Եւ ճառագայթ՝ կերպարանին,
Ծնունդ անճառ սկզբնատըպին,
Անհատաբար Քում ծընողին,
Յորմէ եղեալքըս ներգործին,
Իմանալիք, ւ՛որք երևին,
Մարմին եղեալըս և անմարմին,
Անբանականք հանդերձ Բանին,
Կենդանականք, որք բուսանին,
Եւ անկենդանք, որք ոչ շարժին,
Յորոց ընդ Հօր՝ Քում սիրողին,
Քեզ գոհութիւնք մատուցանին:
Եւ ընդ Հոգւոյդ Քում էակին
Փառատրութիւնք վեր առաքին:
Ի ընտրելոց մաքրագունից,
Որք ընդ յարկաւ Քո մուծանին:
Ընկալ և զիս, Տէր, ընդ նոսին,
Զըստունգանողս պատուիրանին,
Ըզնըմանողս անառակին
Եւ զինչըս Հօրըդ վատնողին,
Զի Քէն պատիւն անարգողին
Եւ հաւասար գոլ անմըտին,
Ի դիւացըն ագարակին,
Զերամ խոզիցն արածողին,
Սովեցելոյն՝ ոչ սով հացին,
Այլ լըսելոյ Տեառնըդ բանին,
Ծանկացելոյ ջերմ եղջերին,
Քաղցըր մեղաց դառնագունին,
Որպէս Ադամն այն առաջին,
Այն, որ մեղօքն անուանի հին,
Որով մեռաք ամենեքին

ՄԱՏ. Ը. 30-32. ՄԱՏ. Ե, 11-13. ՂՈՒ. ԺԵ, 11-32
ԵՂՋԵՐ – ԽՈՋԵՐՔ
ԿԵՌԱԿՈՒՐ

ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ԿԼԱՅԵՑՈՒ ԱՍԱԾ ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՕՐՀՆՈՒՄ ԵՆ ՀԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆԸ ՄԻՇՏ ՔԱՂՑՐՈՒԹՅԱՆ ԵՐԳՈՎ

Հոր Միածին՝ Հիսուս Որդի
Եվ ճառագայթ Նրա կերպի,
Ծնունդ անճառ սկզբնատիպի
Եվ մինուճար Քո ծնողի,
Որից սերվածներս ենք ազդվում,
Որ կան երկրում և երկընքում,
Ստեղծված մարմնով և անմարմին.
Անասուններն հետն ասունի,
Բույսերն աճող ու կենդանի,
Աշարժ իրերը անկենդան,
Որ Քեզ սիրող Հորըդ հետ կան,
Գոհություն ենք Քեզ մատուցում
Եվ Սուրբ Հոգուն Քեզ էակից
Փառատրություն վեր առաքում:
Ընտրյալների հետ մաքրագույն,
Որոնք Քո տանն են ընդունվում,
Ինձ էլ վերցրու՛ նրանց հետ, Տեր,
Որ պատվիրանն եմ Քո ծխտել,
Նըմանվողիս անառակին
Եվ Հորըդ ինչքը վատնողին
Եվ Քո պատիվն անարգողին,
Որ հավասար եմ անմիտին,
Դևերի մեջ ագարակի
Խոզերի երամը հովվողին,
Որ կարոտ եմ ոչ թե հացի,
Այլ անսալու Տիրոջ Բանին,
Ծանկացողին տաք եղջյուրի,
Քաղցր մեղքից դառնագույնին:
Ինչպես Ադամն այն առաջին,
Այն, որ մեղքով կոչվում է հին,
Որով եկավ մահ ամենքին,

Եւ կորուսաք ըզցանկալին:
Ո՛հ, ես նըման մեղաց նըմին
Եւ յանցանաց մօրն եւային,
Եւս առաւել քան ըզնոսին,
Գըտայ յանցող Սուրբ օրինին:
ԾՆՆԴ. Բ, Գ Զի պատուիրան էր նոցա մին,
Վասըն միոյ դառըն պըտղին:
Իսկ ինձ բազումըս քարոզին
Վասըն բազմաց զիս սպանողին:
Յորոց ի բաց կալ հրամայիմ,
Զի մի՛ մահու մեռանիցիմ:
ՍԱՂ. ՃԺԸ
(ՃԺԹ), 61 Եւ ես կապեալ կամ ի նոսին
Տոռամբ մեղաց, որպէս ասին:
Բացի զականջըս պատրողին
Եւ զլըսելիսըս չար օձին,
Լեզուաւ ետու զպատասխանին
Անմըտաբար խորամանկին,
Զաչըս հարի առ ցանկալին,
Յորմէ արգել բան հրամանին:
Ոտք իմ յընթացս արշաւեցին,
Փայտին մահու մերձ զիս ածին:
Ձեռն իմ ձըգեալ յուղէշ ծառին՝
Կթել պըտուղ ինձ մահածին,
Բերանս առեալ ճաշակ մեղուին,
Բայց յորովայնըս մաղձ դառին,
Յորմէ վիժեալ թոյնք վիշապին
Եւ գարշահոտ մահաբերին,
Էհեղ ըզսիրտս ի պղծալին,
Ջերիկամունս ի ջերմ ախտին:
Ըզպատմուճան սըրբասիրին,
Զոր ըզգեցայ յաւազանին,
ՄԱՇԿԵՂԵՆ ՋԳԵՍ- Զայն մերկացայ խաբմամբ չարին,
ՏԸ ԱՂԱՐՆ ԵՐ, Զինև արկի զմաշկեղինին:
ՊԱՏՄՈՒՃԱՆԸ Ընդ փափկութեան կենաց դրախտին,
ՃԱՇԱՒԱՅԻՆԸ Որ իմաստից օրինակին,
Մշակեցի յիմում անձին,
Զփուշ և զտատասկ մեղաց բուսին:
Ընդ անաշխատ կենաց վայրին,
Որ ըստ յուսոյն թեթև ասին,

Եվ կորցրեցինք փափագելին:
Օ՜հ, ես մասն եմ նըրա մեղքի
Եվ մայր Եվայի հանցանքի,
Դեռ նըրանցից էլ ավելի
Ես սուրբ Օրենքը խախտեցի.
Ջի պատվիրանն էր նըրանց մի՝
Չըմոտենալ դառը պըտղին:
Բայց շատերն ինձ քարոզեցին
Ինձ սպանող մեղքերի մասին:
Ուզում եմ ինքս էլ հեռու մընալ,
Մեղքի մահով չըմահանալ:
Բայց կապված եմ նըրանց հետ ես
Մեղքի կապով, ինչպես ասվեց,
Ականջս կախ՝ ինձ խաբողին
Եվ լըսելիքըս՝ չար օձին,
Լեզվով տըվի ես պատասխան
Անմըտաբար խորամանկին,
Աչք գցեցի ցանկալիին՝
Պատվիրանով արգելվածին,
Ոտքերս իսկույն ճամփա ընկան,
Ինձ մոտեցրին փայտին մահվան,
Ձեռք գցեցի ծառի ճյուղին՝
Պըտուղ պոկեմ ինձ մահածին,
Բերանս մեղրի համը առավ,
Բայց փորիս մեջ այն մաղձ դառավ,
Որից վիժեց թույն վիշապի
Եվ գարշահոտ, և մահալի:
Պըղծությունը սիրտըս լըցվեց,
Երիկամունքս ախտահարվեց.
Պատմուճանն էլ սըրբասերի,
Որ ես հագա ավազանում,
Դեն նետեցի՝ խաբված չարից
Եվ շոր հագա մորթեղենից:
Կենաց դրախտի պերճության հետ,
Որ իմաստներն է ցույց տալիս,
Մըշակեցի ես անձը իմ,
Բայց մեղքի փուշ, տատասկ բուսին:
Այս անաշխատ կենաց վայրում,
Որ հույսով են թեթև ասում,

[illegible] Ուտեմ քըրտամբք զառօրէին,
[illegible] Դառնամ ի հող, ուստի առին:
Արդ աղաչեմ ես ընդ նըմին,
ՂՈՒ. ԺԵ. 15-32 Թէ, Հա՛յր, մեղայ Քեզ ի յերկին,
Չեմ արժանի կոչիլ որդին,
Այլ վարձկանացն արա վերջին,
Արժանացո՛ մաքրագունին,
Հօրըդ բարւոյ սուրբ ողջունին
Ընդ հովանեաւ հարսնարանին
Ժողովեսցես զիս վերըստին
Եւ զպատմուճանըն զառաջին,
զոր աւազակք մերկացուցին,
Արկցես զինև դարձեալ կըրկին,
Որպէս ըզզարդ պըճնեալ հարսին,
Զարքունական ըզմատանին,
Ըզնըշանակ տիրականին
Տացես ունել յաջու ձեռին,
Ոչ խոտորել՝ այլ յահեկին:
Եւ պահապան ընդդէմ օձին
Շնորհեա կօշիկ գարշապարին,
Զի մի՛ հարցէ ընդ խաւարին,
Այլ կոխեսցի գըլուխ նորին:
Զենման եզին պարարակին,
Որ ի խաչին պատարագին
Եւ տիգահոս արեան կողին,
Կենաց վըտակ մեզ բըղխողին
Հաղորդս արա զիս վերըստին,
Ըստ օրինակի անառակին:
Ուտել ըզհաց Քո երկնային,
Ըմպել զբաժակ Կենարարին:
Մոլորեցայ յանապատին,
Թափառեցայ յանվայր վայրին,
Որպէս առակն է ոչխարին
ՄԱՏ. ԺԸ, Մի ի թըւոցըն հարիւրին,
12, 13. ՂՈՒ. ԺԵ, Կ Զոր պատառեալ չար թըշնամին,
Վիրօք լըցոյց անհընարին,
Ուստի այլ ոչ է դեղ Վիրին,
Բայց թէ ի Քէն բըժըշկեսցին:
Առ որ գոչեմ արտասուելին,

Քըրտինքով դատում առօրյա,
Դառնում հողը, ուսկից ելանք:
Խընդրում եմ արդ Ադամի հետ,
Թե, Հայր, մեղա Քեզ երկընքում:
Չարժեմ կոչվել ես Քո որդին,
Վարձկաններից դարձրու վերջին,
Արժանացրու սըրբագույնին,
Հորդ բարու սուրբ ողջույնին,
Հովանու տակ հարսնարանի
Ինձ միացրու Դու վերըստին:
Եվ պատմուճանն իմ առաջին,
Որ ավազակները հանեցին,
Խընդրեմ, վըրաս գըցիր կըրկին,
Ինչպես զարդը պըճնյալ հարսի.
Արքունական տուր մատանին,
Իբրև նըշան տիրականի,
Որ դընում ես իմ աջ ձեռքին,
Որ չըշեղվեմ էլ դեպի ձախ,
Որպես պաշտպան ընդդեմ օձի
Տուր ինձ կոշիկ գարշապարի,
Որ չըփորձվեմ ես խավարից,
Այլ տըրորեմ գանգը նըրա:
Զոհաբերմանը պարարտ եզի,
Որ ի խաչին պատարագի,
Եվ տիգահոս արյամբ կողի
Կենաց վտակ մեզ բխողին
Հաղորդ արա ինձ վերըստին,
Ըստ պատմության անառակի,
Որ հացն ուտեմ Քո երկնային,
Բաժակն ըմպեմ Կենարարի:
Անապատում մոլորվեցի,
Անշեն վայրում թափառեցի,
Ինչպես առակն է ոչխարի
Հարյուր հատից մեկի մասին,
Որին որսաց չար թշնամին,
Հասցրեց վերքեր ծանըր, ուժգին:
Ուստի չըկա վերքին այլ դեղ,
Դու վերքերն այդ կըփարատես,
Քեզ եմ կանչում ես լալագին,

Աղաղակեմ զիս փըրկողին,
ՅՈՎՀ. Ժ, 11 Հովիւըդ քաջ և երկնային,
Ել ի խընդիր փոքու հօտին,
ՂՈՒ. Ժե, 9 Ա՛յց արա, Տէր, անկեալ դրամին
Եւ կորուսեալ Քո պատկերին,
Զոր թաղեցի մեղաց յախտին
Եւ չարաչար հոտեալ յաղբին:
ՍԱՂ. Ծ, 9 Լուա և զիս, յաղտոյ անձին
ՏԵՍ ՂՈՒ. Ժե, 8 Ի մաքրութեան ձեան սպիտակին:
(ՏԱՍԸ ԴՐԱՄԸ) Լըցցես ըզթիւ տասներորդին,
ՆԿԱՏԻ ՈՒՆԻ ՍԵ- Որպէս ըզսուրբ քառասնեկին,
ԲԱՍՏԻԱՅԻ (ՓՈՔՐ Բ՛արձ ի յուսոյ, ըստ ոչխարին,
ՀԱՅՋ) ՔԱՌԱՍՈՒՆ Հանցես ի վեր զանկեալ հոգին,
ՎԿԱՆԵՐԻՆ (Դ ԴԱՐ) Ուրախացո՛ զզօրսըն վերին
Վասըն միոյ մեղաւորին,
ԾՆՆ. Դ Ընդ Աբելի պատարագին
Ի հօտ անուշ Քեզ ընծային:
Ընկալ և զիմս, Տէր, ընդ նըմին,
Մի խոտեցայց ընդ Կայենին:
Թէպէտ և ոչ ըստ արժանին
Քեզ մատուցի զողջակիզին,
Զի ընտրեցի զիմն առաջին
Եւ զՔոյն վերջին մասն ի զոհին:
Նըմանեցայ նենգաւորին,
Եղբայրասպան դաւաճանին,
Ըսպանելով զիս կամովին
Եւ նենգելով անձամբ անձին,
Ո՛չ զարտաքին եղբօր մարմին,
Այլ ըզհոգիս իմ ըզներքին,
Ուստի շըրջիմ երերալի
Միտք և խորհուրդք իմ տատանին,
Որ մխիթար տըրտմազգեցին
ԾՆՆ. Ե Ետուր ըզՍէթ ընդ Աբելին,
Լինիլ սերունդ նախաստեղծին
Եւ նահապետ բարւոյ ազգին:
Փարատեցո՛, Տէր, և յինէն
Զորդեկորոյս սուգ տըրտմագին,
Որք են մասունք իմաստութեան,
Ծընեալ մանկունք գործնականին

Աղաղակում ինձ փըրկողին:
Հովիվըդ քաջ և երկնային,
Ել փընտրելու փոքր հոտին,
Այց արա, Տեր, ընկած դրամին
Եվ կորուսյալ Քո պատկերին,
Որ թաղեցի մեղքի ախտում
Եվ այլանդակ հոտած աղբում:
Անձիս աղտից լըվա, Տեր, ինձ,
Մաքուր դարձրու սպիտակ ձյունից,
Լըրացրու թիվը տասներորդ,
Ինչպես որ սուրբ քառասունին:
Ոչխարի պես դիր Քո ուսին,
Երկինք հանիր ընկած հոգին,
Ուրախացրու զորքը վերին
Հանուն այս մի մեղավորի,
Ջոհաբերման պես Աբելի
Իբրև անուշ հոտ ընծայվի,
Նըրա հետ իմն էլ ընդունիր,
Կայենի պես ինձ մի մերժիր,
Թեպետ և չէր Քեզ արժանի
Ողջակեզն այն, որ մատուցի,
Վերցրի զոհի մասն առաջին,
Իսկ Քեզ տըվի մասը վերջին,
Նըմանվեցի նենգավորին,
Եղբայրասպան դավաճանին,
Ըսպանելով ինձ կամովին,
Խաբելով ինքըս իմ անձին,
Ոչ ինձնից դուրս եղբոր մարմինն,
Այլ՝ սպանեցի հոգիս ներքին:
Ուստի շըրջում եմ երերուն,
Միտքս ու խոհերս են մոլորուն,
Իբր սփոփանք տըխրամածին
Աբելի հետ տըվիր Սեթին՝
Սերունդ լինել նախաստեղծին
Եվ նահապետ բարի ազգին:
Փարատիր, Տեր, նաև ինձնից
Որդեկորույս սուգը վշտի,
Որ մասունք են իմաստության,
Ծընված մանուկներ գործնական,

Եւ աճեցո՛ յիս վերըստին
Զանապական սերմըն բանին,
Զլուսոյ ծընունդն իմանալին,
Հրեշտակական և երկնային:
Մի նմանեցայց որդւոց Սէթին,
Ցանկալ դըստերցըն Կայենին,
ԾՆՆ. Ե Այլ՝ Ենովսայ նահապետին,
Որ յուսացաւ նախ առաջին,
Եւ Ենովքայ անարատին,
Այն, որ փոխեալն է ի դրախտին,
Որ ժառանգեաց ըզհայրենին
Ընդ պահելոյ պատուիրանին:
Բայց յայսցանէ զինչ օգտիցիմ,
Որոց նըման ես ոչ լինիմ:
Զի չհետևիմ շաւղաց նոցին,
Ոչ վերանամ մըտօք յերկին,
Այլ կամ անկեալ յախտըս խորին,
Ի գուբ տըղմոյ գէջ խոնաւին,
Որով անդունդք անհընարին
Զիս ի յինքեանս ըմբըռնեցին:
Որպէս մարդիկ նախնի դարին,
Որք ի յաւուրս էին Նոյին,
Որք ուտէին և ըմպէին,
Անասնաբար խառնակէին,
Մինչև եհաս ջուր հեղեղին,
Ի՛ապականեաց զամենեսին:
Միայն պահեալ՝ այն որ պահեաց
ԾՆՆ. Զ, Է Ամ հինգ հարիւր ըզկուսութիւնն,
Այլ որ ըզնոյ և զեօթն ոգին,
Ապրեցուցեր ի տապանին,
Հանդերձ սեռիւք չորքոտանին
Եւ օդական թևաւորին:
Եւ զիս պահեա ի հեղեղէ
Յաշխահածուփ ալեաց չարին
Քո տապանաւ սուրբ խորանին,
Ամրածածուկ ընդ հովանին:
ԾՆՆ. Ը, 7 Մերժեա յոգւոյս իմ տապանէ
Զգիշերատես գոյն ագռաւին,
Որ է նա տիպ գաղտնի նետին,

Աճեցրու մեջըս վերըստին
Անապական սերմը Բանի,
Լույսի ծընունդն իմանալի
Հրեշտակային և երկնային:
Չընըմանվեմ Սեթի զարմին՝
Յանկամ Կայենի դուստրերին,
Այլ՝ թող Ենովս նահապետին,
Որն առաջինն էր, որ հուսաց,
Նաև անարատ Ենովքին,
Որը դըրախտ փոխադըրվեց,
Որ ժառանգեց իր հայրենին՝
Հետևելով պատվիրանին:
Բայց ինչ օգուտ ինձ նրանցից,
Որոնց նման չեմ լինի ես:
Թողեցի ես նըրանց ուղին,
Չըվերացա մտքով երկինք,
Այլ ընկա խոր ախտերի մեջ,
Տղմի գուբը խոնավ ու գեջ,
Որ վիհեր են չտեսնըված,
Ուր մնացի ես բանտարկված,
Ինչպես մարդիկ հին դարերի,
Նոյի կենաց ժամանակի,
Որ լափում էին և հարբում,
Անասունի պես խառնակվում,
Մինչ օրն հասավ ջըրհեղեղի,
Վերջը տըրվեց այդ ամենի,
Միայն ով հինգ հարյուր տարի
Պահեց կուսությունն իր մարմնի՝
Նոյին, նրա հետ յոթ հոգու
Դու ապրեցրիր տապանի մեջ,
Չորքոտանի տեսակներով,
Նաև օդի թռչուններով:
Ինձ էլ պահիր ջըրհեղեղից,
Աշխարհածուփ չար ալիքից
Քո տապանով սուրբ խորանի,
Հովանու տակ ամուր ծածկի:
Մերժիր հոգու իմ տապանից
Գիշերատես գույնն ագռավի,
Որ խորհուրդն է գաղտնի նետի,

Այն, որ թըռչի ընդ խաւարին.
Եւ բաց ի սիրտս աղջամըղջին
Ինձ պատուհան մեծի լուսին,
Յորմէ խաւարըն մեղսածին
Հալածական անհետ լինին:

ԾՆՆ. Ը, 6-12 Մոյծ ընդ բացեալ լուսարանին,
Զի գոյն ոսկւոյ սուրբ զաղաւնին,
Բերել առ յիս ըզձիթենին,
Որ է մաքուր և Սուրբ Հոգին:
Բայց ես ախտիւ մարմնականին
Միայն չհեղձի զանձն ի ծովին,
Այլ հոգեկան և մըտաւոր
Կըրիւք եղէ անօթ չարին.
Քանզի նըման գոլով նոցին,

ԾՆՆ. ԺԱ, 1-9 Որ զաշտարակըն շինեցին
ԾՆՆ. Ժ, 10 Ի Քաղանէ մեծի դաշտին
Եւ յաշխարհի Բաբելովնին,
Որ ի ջըրոցըն հեղեղին,
Եթէ գայցէ, այլ պահիցին.
Կամ թէ յերկինըս վերանալ
Հըպարտութեամբըն խորհէին:
Մինչև հընչեալ հողմոյ յուժգին,
Հոգւոյն հընչումըն սաստկագին,
Քակեաց զլերինըս հըպարտին
Եւ զաշտարակն այն ահագին.
Եւ ըզլեզուսըն միակին

ԾՆՆ. ԺԱ, 1-9 Զայն խառնակեաց յեօթանասնին,
Զի մի ի չար միաբանին,
Այլ բարիոք բաժանեսցին:
Նոյնպէս և ես բարձրացուցի
Զպարիսպ մեղաց աշտարակին,
Հըպարտութեամբ շինեալ քարամբք
Ամբարտաւան ամբարտակին.
Որոյ հըմուտ ճարտարապետ

ՍԱՏԱՆԱՆ, Է Արուսեակն անդըդային,
ԼՅՈՒԾԻՉԵՐԸ Եւ գործօնեայք չար իշխանին,
Դիւացըն գունդք լեգէովնին:
Ոյք և անկեալ կործանիցին
Ընդ մեքենայս, զոր շինեցին.

Որ թըռչում է մեջը մութի,
Եվ սըրտիս մեջ աղջամուղջի
Բաց պատուհանը մեծ լույսի,
Որից խավարը մեղսածին
Հալածական անհետ կորչի:
Բեր միջով բաց լուսարանի
Սուրբ աղավնու գույնը ոսկի,
Որ ինձ բերի-տա ձիթենին,
Որն է մաքուր և Սուրբ Հոգին:
Բայց անձս ախտով մարմընավոր
Ծովում միայն չըխեղդեցի,
Այլ հոգեկան և մըտավոր
Կըրող եղա չար անոթի,
Քանզի նըրանց նըմանվեցի,
Որ աշտարակը շինեցին
Բաբելոնի երկրում ազատ,
Այն Քաղանե դաշտում արձակ,
Որ եթե գար նոր ջրհեղեղ,
Պահպանեին այն համարձակ,
Կամ խորհեցին գոռոզությամբ
Դեպի երկինքը բարձրանալ,
Մինչև հընչեց հողմը ուժգին,
Հոգու հնչումը սաստկագին,
Քանդեց լեռները այն հպարտ
Եվ աշտարակը ահագին,
Եվ գործածվող միակ լեզուն
Խառնեց, դարձրեց յոթանասուն,
Որ չար մտքով չմիանան,
Այլ բարիով հեռու մնան:
Նույնպես և ես վեր բարձրացրի
Մեղքի բուրգի շուրջը պարիսպ,
Հպարտությամբ ես շարեցի
Քարերը գոռ ամբարտակի,
Որի հմուտ ճարտարապետն
Արուսյակն է անդընդային,
Գործիքները՝ չար իշխանի,
Դևագնդերը լեգեոնի,
Որոնք ընկած կըկործանվեն
Գործիքներով, որ շինեցին.

Եւ իմ զերծեալ հաղբից նոցին,
Որպէս երբեմն եբրայեցին:
ԱՅԼ ՀՐԱՏ. ՄԵՋ՝ «ԵԲԵՐՆ ԵԲՐԱՅԵՑՈՐՆ», ՔՐՐ ԱՆՈՒՆԻՑ Է ԵԲՐԱՅԵՑԻ ՅԵՂԻ ԱՆՈՒՆԸ (ԾՆՆ. ԺԱ, 16-17)
Որ օրինակ Քեզ ընտրեցեր
Զմելքիսեդէկ քահանացին,
Անհայր անմայր անազգային
Եւ քահանայ աստուածային,
Տասանորդող ղևտականին,
ԾՆՆ. ԺԴ, 18-19
Մինչ էր յերանսն Աբրահամին
ՂԵՒՏ. ԻԵ, 30-32
Եւ թագաւոր էր Սաղիմին,
Որպէս և Դու, Տէր երկնային:
Ընկալ և զիս հայցմամբ նորին
Յերուսաղէմըդ Քո վերին
Թագաւորել ընդ Քեզ ի նմին,
Իբրև զորդիսըն Սիովնին:
Որ կոչեցեր ազդմամբ ձայնին
Ըզնահապետ հանուրց ազգին,
ԶԱբրահամն այն առաջին
ԾՆՆ. ԺԸ, 1
Պանդըխտանալ յօտար երկրին.
Երևեցար ի Մամբրէին,
Մինչդեռ նըստեր նա ընդ կաղնին,
Կերակրեցար, որպէս մարմին,
Յորժամ բնութիւնդ էր անմարմին,
Եւ խոստացար նըմա զորդին,
ԾՆՆ. ԺԸ, 10
Որով որդիք մարդկան օրհնին
Ի յօրինակ Քո գալըստեանդ,
Որ մարմնացար յորդւոց նորին:
Հանցես և զիս, յորոց նեղիմ,
Միջոյ չարեաց նենգաւորին,
Ի բազմագոյն ախտից նեղչին
Եւ ի բանից մեղսասիրին:
Զնըժդեհացեալս մարմնով ի սմին
Յօտարոտի կեանս երկրային
Փոփոխեսցես ի հայրենին,
Որպէս զորդիսն Աբրահամին:
Երևեցո զերեսս Քո, Տէր,
Ինձ, որ նըստիմ ներքոյ ստուերին,
Զի ընդ առաջ Քո յարուցեալ
Երկիրպագից Քեզ ի գետին:
Խոնահեսցիս յիջևանիս,

Աղբից նրանց ազատվեցի,
Ինչպես երբեմն եբրայեցին:
Դու նախատիպ Քեզ ընտրեցիր
Մելքիսեդեկ քահանացին՝
Անհայր, անմայր, անազգային
Եվ քահանա աստվածային,
Տասանորդողը ղևտականի,
Քանի ցեղն էր Աբրահամի,
Նա թագավորն էր Սաղիմի.
Եվ Դու այդպես, Տեր երկնային,
Նրա հայցով ինձ ընդունիր
Երուսաղեմը Քո վերին՝
Թագավորեմ այնտեղ Քեզ հետ,
Ինչպես որդիքը Սիոնի,
Որ կանչեցիր ազդու ձայնով
Նահապետին ողջ ազգերի,
Աբրահամին, որն ըսկըզբում
Պանդըխտացավ օտար երկրում,
Եկար կաղնին Դու Մամբրեի,
Մինչ նըստած էր նա կաղնու տակ,
Կերակրվեցիր, ինչպես մարմին,
Երբ բնությունդ էր անմարմին,
Նրան որդի դու խոստացար,
Որով որդիները մարդկանց
Օրհնությունն են Քո ընդունում
Օրինակով Քո գալըստյան,
Որ մարմնացար Դու նրանց մեջ:
Ազատիր ինձ նեղիչներից,
Նենգավորի չարիքներից,
Նեղչի բազմագույն ախտերից
Եվ մեղք սիրող չարի խոսքից,
Թափառականիս մարմնով այստեղ,
Օտար կյանքում այս երկրային՝
Տար դեպի կյանքն իմ հայրենի,
Հանց զարմերին Աբրահամի:
Ինձ էլ ցույց տուր երեսը Քո,
Որ նըստած եմ ստվերիդ ներքո,
Եվ Քո առաջ երբ ես լինեմ՝
Մինչև գետին երկրպագեմ,
Որ խոնարհվեմ իջման վայրում

Ընդ Քեզ և Հայր Քո և Հոգին.
Կերակրեսցիս յիմում բարին
Յաղքատանաց և ի չընչին:
Զանծնընդական զամուլ հոգիս
Բարեաց գործոց հոգևորին
Պըտղաբերեա ընդ Սառային
Աւետաւոր բանիւ Քոյին.
Որ աղօթիւք հայրապետին
Սիրեցելոյ Աբրահամին
Ազատեցեր զեղբօր որդին
ԾՆՆ. ԺԹ Հանեալ ըզՂովտ ի Սոդոմին,
Զիս արձակեա, Տէր, ընդ նըմին
Կապից մեղաց հայցմամբ նորին
Ի խորհըրդոց սոդոմային
Եւ ի գործոց պըղծասիրին.
Զի մի ի հուր ծըծըմբածին
Տոչորիցիմ որպէս նոքին.
Եւ մի յարձան մածանիցիմ,
Որպէս ըզկինն ի չար դարձին:
Այլ հրամայեա սուրբ հրեշտակին
Յափըշտակել զիս ընդ նոսին,
Հանել ի լեառնըդ երկնային,
Կարգել ի դասն ընդ որ կացին:
Ստեղծիչ սըրտից, Տէր, առանձին
Տեսող գործոց և խորհըրդին,
Ի փորձ մըտեր առ սիրելին,
Պատարագել Քեզ զամլորդին,
Երթալ ի մեծ բարձըր ի լերին
Ի Գողգոթա, որպէս ասին,
Բառնալ ըզփայտ ողջակիզին
Իւր միածնին ողջախոհին.
Զոր և հանեալ ի սեղանին,
Որպէս ըզՔեզ, Տէր, ի խաչին,
Բուռըն հարեալ ի սուսերին
Եւ մերձ եդեալ պարանոցին,
ԾՆՆ. ԻԲ, 1-13 Մինչ ի վերուստ հնչեալ ձայնին,
Թէ մի մըխեր ի պատանին,
Այլ հայեսցիս յաջոյ ձեռին
Կախեալ ըզխոյն ի սաբեկին:

Քեզ հետ և Հորը Քո, և Հոգուն,
Որ ճաշակես բարիքը իմ
Ողորմելի, աղքատ, չնչին:
Իմ անծնունդ, ամուլ հոգում
Բարի գործերը հոգևոր
Պտղաբերեն Սառայի հետ
Ավետավոր Քո խոսքերով.
Երբ աղոթքով հայրապետի՝
Քո սիրելի Աբրահամի
Եղբորորդուն ազատեցիր,
Սոդոմից Ղովտին հանեցիր:
Նրա հետ, Տեր, փըրկիր և ինձ
Նըրա խոսքով մեղքի կապից,
Սոդոմային խորհուրդներից,
Պղծասերի սև գործերից,
Որ հրերում ծծմբական
Չտուչորվեմ նրանց նման,
Ոչ էլ դառնամ քար, հանց արձան,
Ինչպես կինը իր չար դարձին,
Այլ պատվիրիր հըրեշտակին՝
Ինձ էլ տանել նրանց կողքին,
Հանել Քո լեռը երկնային
Եվ միացնել նրանց դասին:
Տեր, արարիչ Դու սըրտերի,
Քըննող գործերի, խոհերի,
Փորձեցիր Քո սիրելին՝
Զոհ բերել իր մինուճարին,
Գնալ դեպի մեծ, բարձըր լեռ,
Որ Գողգոթա կարող ես կոչել,
Ողջակեզի փայտ ժողովել,
Իր միածին անմեղ մանկան
Պատարագի հանել սեղան,
Ինչպես Քեզ, Տեր, խաչի վրան.
Ապա ձեռքը վերցնել սուսեր
Եվ պարանոցին մոտեցնել,
Մինչ ի վերուստ հնչեր մի ձայն,
Թե մի՛ մորթիր այդ երեխան,
Այլ նայիր դու քո աջ ձեռքին,
Սաբեկա ծառից կախված խոյին,

Զոր փոխանակ բանականին,
Իսահակայ Քում ծառային
Ետուր ի զոհ պատարագին
Զանբան ստեղծեալըն կենդանին:
ՅԱԿ. Ա, 13-14 Մի զիս փորձեր, Տէր, ընդ նըմին,
Զանփորձ բարեաց ամենայնին,
Զփորձեալս ի չար և յոչ բարին
Եւ զանհամբեր անձն իմ փորձին:
Զի ոչ արծաթ եմ քուրային
Եւ ոչ ոսկի թէ հրով փորձիմ.
Այլ եմ անագ ընդ կապարին,
Որ ի պարզելըն կորընչին.
Եւ ոչ եմ վէմ յեզր ծովին,
Որ ի յալեաց անշարժ պահին.
Եւ ոչ արմատ ծառոց խորին,
Որ ի հողմոց ոչ տապալին:
Այլ եմ նըման բեկեալ նաւին,
Տարաբերեալ ի մէջ ծովին,
Կամ հողմահար խըռիւ խոտին
Ի ժամանակս աշնանային.
Արդ մի տանիր ի փորձութիւն,
Որ ոչ փորձես զոք երկրածին:
Զի Քո անփորձ գոլով չարին,
Փորձիմք ի մէնջ, որպէս ասին:
Այլ ի փըրկել զիս փութացիր
Ի փորձութեանց բըռնաւորին,
Որպէս ըզհայրըն հաւատոյ
Յորոգայթից փորձասիրին.
Պատարագել ընդ խընդալին
Զհոգի ըզմիտս և ըզմարմին,
Կենդանական զոհ անմահիդ
Հաճոյ և սուրբ աստուածային:
Ընդ ըզկըրտսեր ծընեալ զորդին
ԾՆՆ. ԻԵ, Իսահակայ և Ռեբեկին·
25-26 Անուանեցեր Քեզ սիրելին
ԶՅակովբ փոխեալն յԻսրայէլին.
Ցուցեր նըմա զապագային,
Կանգնեալ սանդուղք յերկրէ յերկին,
Յոր Տէր ի նմա բարձըր ի տեղին,
Եւ ել և էջ հրեշտակային:

Ոչ թե խոսող բանականին
Եվ քո ծառա Իսահակին,
Այլ դարձրու զոհ պատարագին
Անբան ստեղծված այն կենդանին:
Մի փորձիր, Տեր, նրա հետ ինձ,
Բարի գործով չըստուգվածիս,
Ոչ թե բարուց, փորձված չարից,
Չի դիմանա անձն իմ փորձի:
Ջի ոչ արծաթ եմ քուրայում,
Ոչ էլ ոսկի՝ փորձված հըրում,
Այլ անագ եմ կապարի հետ,
Որ պարզվում-կորչում է անհետ:
Ոչ էլ վեմ եմ ծովեզերքին,
Անշարժ՝ ընդդեմ գոռ ալիքին,
Ոչ՝ ծառերի արմատ խորին,
Որ դիմանում է հողմերին,
Այլ նման եմ նավին բեկված՝
Ծովի խորքում տարուբերված,
Կամ հողմահար խըռիվ խոտին՝
Ժամանակին աշնանային:
Արդ մի տանիր ի փորձություն,
Փորձության մի մատնիր մարդուն,
Որ Քեզնով դեմ կանգնած չարին
Մեր մեջ փորձվենք, ինչպես ասին:
Այլ փութացիր ինձ փրկության
Բըռնավորից սև փորձության,
Ինչպես որ հայրը հավատի
Փորձասերի որոգայթից,
Պատարագիր խընդությամբ լի
Մարմինն ու միտքը և հոգին,
Կենդանի զոհ՝ Քեզ՝ անմահին
Հաճո և սուրբ աստվածային:
Դու կոչեցիր Քեզ սիրելի
Իսահակի և Ռեբեկի
Ծնած կրտսեր այն զավակին,
Իսրայել դարձած Հակոբին,
Նրան ցույց տվիր ապագան,
Երկրից երկինք սանդուղքը այն,
Որտեղ Տերըդ է իր բարձունքին
Եվ ելևէջն հրեշտակային:

Իւղով օծեալ ըզգլուխ վիմին,
Տուն անուանէր տիրականին,
Ի նմանութիւն մեծ խորհըրդին,
Զոր հոգէկիրքըն ծանուցին,
Գօտեմարտեալ յերեկոյին,
Որպէս է գրեալ ի Սուրբ տառին,
Եւ ժուժկալեալ յառաւօտին,
Սակայն յաղթեալ որպէս մարմին:
Եւ ես կըրտսերս առ ի բարին
Եւ կատարեալ գոլ ի չարին,
Որպէս Եսաւըն նախածին,
Բայց ըստ հոգւոյ գոլով վերջին.
Վաճառակուրս անգին գանձին
Վասըն յագման որովայնին,
Եւ եղծանողըս կամովին
Զգիրս անդրանկացն, որ ի յերկին,
Զոր աղաչեմ զլոյսըդ վերին
Զիշխան դասուցըն հրեղինին,
Բացցին և ինձ դրունք եթերին,
Որպէս յայնժամ Իսրայէլին:
Հանցես ի վեր զանկեալ հոգիս,
Ըստ լուսակազմ աստիճանին,
Որ յօրինակ մարդկան բերին
Յերկէ յերկինս անդրադարձին:
Օծմամբ անուշ իւղոյ Հոգւոյն,
Զոր կորուսի խաբմամբ չարին,
Օծցես ըզգլուխ իմ վերըստին
Պահպանական աջով Քոյին:
Ոչ ժուժկալեմ դէմ հըզօրիդ
Գօտեկըռիւ ըստ Յակովբին.
Քանզի տըկար գոլով անձին
Անկայ ի բուռն անըզգամին.
Այլ կարկառեա՛ զաջդ երկնային,
Հա՛ս ի թիկունս ինձ ի մարտին.
Եւ խորտակեա՛ զիմ թըշնամին.
Զի մի՛ կացցէ այլ ի յոտին:
Երկոտասան ցեղապետին
Ծընեալ որդւոց նահապետին,
Դաւաճանեալ մետասանին
ԶՅովսէփ, ի ձեռս Իսմայէլին

ԾՆՆ. ԼԷ, 25-28

Յուղով օծեց նա քարը այն
Եվ անվանեց տուն տիրական,
Նըմանությամբ մեծ խորհըրդի,
Հոգեկիրներին լոկ հայտնի,
Երեկոյան գոտեմարտեց,
Ինչպես գրված է Սուրբ Գրքում,
Եվ մինչ առավոտ դիմադրեց,
Սակայն որպես մարմին պարտվեց:
Եվ ես փոքր եմ բարու համար,
Բայց կատարյալ չարի համար,
Հանց Եսավը սկզբում ծնված,
Բայց հոգով վերջինը եղած,
Անգին գանձս եմ ծախում էժան
Հանուն իմ փորի հագեցման
Եվ եղծանում եմ կամովին
Երկնից տրված գիրն անդրանկի.
Աղաչում եմ Քեզ, լույս վերին,
Տիրոջն հրեղեն դասերի,
Ինձ էլ բացվի դուռն եթերի,
Ինչպես բացվեց Իսրայելին:
Վեր հանիր իմ ընկած հոգին,
Դիր լուսակազմ աստիճանին,
Որ օրինակ է մարդկանց բերվում,
Երկրից երկինք անդրադարձվում,
Օծված Հոգու անուշ յուղով,
Որ կորցրի չարի թակարդով,
Օծիր գլուխըս վերըստին
Քո պահպանող աջով կրկին:
Չդիմացա գոտեմարտում,
Ինչպես Հակոբը անցյալում:
Քանզի հոգով եմ իմ տկար,
Անզգամի բուռն ես ընկա:
Կարկառիր աջըդ երկնային,
Թիկունք դարձիր ինձ այս մարտին,
Եվ խորտակիր իմ ոսոխին,
Որ չըկանգնի այլևս ոտքի:
Նահապետի որդիներից
Ծնված տասներկու ցեղապետից
Տասնըմեկն ահա մատնեցին
Իրենց եղբորը՝ Հովսեփին

Զեղբայրն իւրեանց վաճառեցին
Ընդ երեսուն դահեկանին,
Ի նմանութիւն աշակերտին,
Գաղտ նենգաւոր գոլ Յուդային:
ԾՆՆ. ԼԹ, Ի Վաճառեցար, Տէր, ընդ նըմին
Ծառայ ի տան Պետափրէին,
Եւ փըրկեցեր յեգիպտուհւոյն
Զոգի մաքուր ողջախոհին.
Մըտեր ի բանտ փարաւօնին,
Տեսիլ ցուցեր ի գիշերին.
Արձակեցեր վասն երազին
Եւ կացուցեր տէր աշխարհին:
Նոյնպէս և ինձ դաւ գործեցին
Որդիքըն մօր գաղտ նենգեցին,
Բազմաբեղուն ախտից մեղաց
Վաճառեցին զիս դիւրագին:
Թէ և լըցի զկամըս նորին,
Անհակառակ գոլով նըմին,
Սակայն էարկ զիս ի բանտին,
Յանել անլոյս արգելանին:
Այլ որ ըզնա յամենայնին
Ազատեցեր անյոյս վայրին
Եւ զիս փըրկեա, Տէր, ընդ նըմին
Ի զանազան ախտից չարին.
Եգիպտուհւոյ վավաշոտին
Մի մատնեցայց գարշ պոռնըկին,
Այն, որ սողայ նըման օձին,
Ահեղ գոչէ ըստ առիւծին:
Այլ բարձրացո՛ քան ըզնոսին
Եւ տէր կացո՛ եգիպտոսին,
Զի յաղթեցից չար իշխանին,
Աներևոյթ բըռնաւորին:
Ի սովամահ լինիլ նոցին,
Զիս տո՛ւն արա կենաց հացին.
Զի հագեցայց և բաշխեցից,
Որք են կարօտ անմահ բանին:
ՑՈԲ Ա ԶՅօբ յիշեսցուք զերանելին,
Այն որ յիշման է արժանի.
Թէպէտ յորդւոցն է յեսաւին,
Այլ գերագոյն քան զՅակովբին:

Եվ երեսուն դահեկանով
Իսմայելին վաճառեցին,
Նըմանությամբ աշակերտի,
Նենգ գաղտնամոլ այն Հուդայի:
Վաճառվեցիր, Տեր, նըրա հետ,
Իբրև ծառա Պետափրեի
Եվ փըրկեցիր եգիպտուհուց
Դու անաղարտ մաքուր հոգին,
Մըտար բանտը փարավոնի,
Գիշերն երազ աչքին բերիր,
Արձակեցիր ըստ երազի
Եվ դարձրիր տերը աշխարհի.
Իմ դեմ էլ գաղտ դավ գործեցին,
Մորըս որդիքն ինձ նենգեցին,
Մեղքի ախտերին բազմածին
Էժան գընով վաճառեցին:
Թեև կամքը կատարեցի
Եվ հակառակ չգնացի,
Սակայն նա ինձ պահեց բանտում,
Անել, անլույս այն թակարդում:
Եթե նըրան ամեն դեպքում
Ազատեցիր անհույս վայրից,
Տեր, նըրա հետ փըրկիր և ինձ
Չարի զանազան ախտերից,
Եգիպտուհուց այն վավաշոտ՝
Չըմատնըվեմ գարշ պոռնիկին,
Նա, որ սողում է ինչպես օձ,
Ահեղ գոչում, ինչպես առյուծ,
Այլ բարձրացրու նրանցից վեր,
Եգիպտոսին դարձրու ինձ տեր,
Որ ես հաղթեմ չար իշխանին,
Աներևույթ բռնավորին:
Երբ սովամահ լինեն նրանք,
Ինձ տուն տուր, Տեր, կենաց հացի,
Որ հագեցնեմ ես և բաշխեմ,
Ով կարոտ է անմահ խոսքին:
Հովբին հիշենք երանելի,
Որը հիշման է արժանի:
Թեև ցեղից է եսավի,
Բայց գերագույն է երևի,
Քան որդիները Հակոբի:

Այն, որ ի Քէն յոյժ գովելին
Եւ վըկայեալն է ի բարին,
Թէ այր արդար և ճըշմարիտ
Եւ կատարեալ յամենայնին.
Զոր բանսարկեր չար թշնամին,
Խընդրեր ի փորձ պատերազմին
Որում տըւեալ իշխանութիւն,
Յայտնի լինել Քում ծառային:
Նախ զարտաքին ստացուած մեծին
Զընջէր ի սպառ ըզկենդանին.
Ապա զորդիսն ըզտասնեսին
Սպան յապարանս ի բազմոցին:
Որոց հասեալ առ նա գուժին,
Ոչ բանս ասէր նա մարդկային,
Այլ գոհութիւնս աստուածային
Իմաստութեամբ բըղխէր հոգին.
Տէր, ասէ, ետ ըզմեծութիւն
Եւ Տէր էառ, որպէս կամին.
ՅՈԲ Ա, 21 Ջի մերկ ելաք յորովայնէ,
Եւ մերկ դընիմք ի տապանին:
ՅՈԲ Բ Դարձեալ վառեալ առ նա չարին
Ջիւր մեքենայս բազմագունին,
Խընդրել ի Քէն զնորին մարմին
Տանջել ցաւօք անհընարին:
Որոյ առեալ ըզցանկալին,
Բայց ոչ էհաս յիւր ըղձալին.
Այլ մանրեցաւ ծախող ժանին,
Իբր ի պըղինձ կամ յերկաթին:
Քանզի սաստիկ շարժեաց յախտին
Եւ յորդնալից արար զմարմին,
Նըստէր նեխեալ ի մէջ աղբին,
Քերէր քարամբ զշարաւ վիրին:
ՅՈԲ Բ, 8-13 Բարեկամացն, որք մերձ եկին,
Բանիւք զըզուէր զերանելին.
Այլ և կընոջն անըզգամին,
Զոր զէն առեալ ըստ Եւային:
Եւ այսքանեօք ոչ շարժեցին
Զանդամանդեայ վէմ հաւատին,
Խօսել բանիւ հայհոյութիւն
Առ տիրականըդ Քո բարին.

Նա՝ Քո կողմից հույժ գովելի
Եվ վկայված իբրև բարի,
Այր, որ արդար է, ճշմարիտ
Եվ կատարյալ է բոլորից.
Բանասարկում էր չար թշնամին,
Նրան քաշում պատերազմի
Իրեն տըրված իշխանությամբ,
Որ հայտնի էր Քո ծառային:
Նախ արտաքին իր կայքը մեծ
Եվ խաշները իսպառ ջնջեց,
Ապա տասը զավակներին
Սպանեց տանը ճաշի ժամին,
Որոնց գույժը հասավ նրան,
Բայց բան չասաց նա մարդկային,
Այլ գոհությամբ աստվածային
Իմաստությամբ հորդեց հոգին:
Տերն, ասաց, տվեց մեծություն
Եվ տերն առավ ետ կամովին,
Որովայնից մերկ ելանք մենք
Եվ գերեզման մերկ կըդըրվենք:
Դարձյալ չարը իր դեմ լցվեց
Մախանքներով իր բազմագույն,
Նրա մարմինը Քեզնից խընդրեց,
Որ անպատում ցավով լըլկի.
Առավ մարմինն այն անձկագին,
Բայց չհասավ իր բաղձանքին,
Փշրեց ժանիքն ամենակուլ՝
Հանց պըղընձին կամ երկաթին,
Ախտով լցրեց սարսափելի,
Մարմինն արեց որդերով լի.
Եվ նստած Հովբը աղբերում՝
Քարով վերքերն էր փորփըրում,
Իր մոտն եկած ընկերների
Խոսքից զըզվեց երանելին,
Նաև հիմար կնոջ խոսքից,
Որ զինվել էր, ինչպես Եվան:
Բայց այս ամենն էլ չխախտեց
Վեմն հավատի ադամանդյա,
Հայհոյական ոչինչ չասեց
Քո տիրական խոսքին ոսկյա,

Այլ գոհանայր ըզՔէն ի նմին,
Ընդդիմանայր բանից նոցին.
ՅՈԲ ԼԸ-ԽԲ Մինչև եղև զըրաւ մարտին
Եւ կատարումըն հանդիսին,
Երևեցար, Տէր, ի միգին
Եւ խօսեցար ընդ սիրելին.
Պըսակ ետուր Դու յաղթողին,
Առողջութիւն յոյժ հիւանդին.
Ըզկենդանեացն ազգ անբանին
Զայն շնորհեցեր նըմա կըրկին.
Իսկ ըզբնութիւն բանականին
Պարգևեցեր նոյն միակին:
Եւ այս խորհուրդ ծածկեալ խորին
Յառաջագոյն անդ ցուցանին,
Թէ որք մեռանն, ոչ կորընչին,
Այլ յարիցին յօրըն վերջին:
Արդ ես հայցմամբ նահատակին
Եւ համբերող ճըգնաւորին
Առ Քեզ կարդամ և պաղատիմ,
Հեղում զարտօսըր լալագին.
Զի թէ խընդրէ իմ թըշնամին
Առ ի փորձել զիս ի մարտին,
Մի՛ տար ի ձեռս աւազակին,
Մի՛ մատնեսցես կամաց նորին:
Զի ես տըկար լուծեալ մարմին,
Հոգիս յօժար, բայց ոչ շարժին
Անձն իմ խաւար, միտքըս մըթին,
Կամաւ ի բանտ կամ ի խորին.
Բայց Դու ընդ իմ տարտամս անձին
Մարտիր ընդդէմ ախոյանին.
Որ ասացեր քաջալերել,
Զի յաղթեցեր չար իշխանին:
Միայն զկամելս իմ ի բարին
Ընկա՛լ փոխան Յոբայ ջանին
Եւ ըզպըսակ յաղթանակին
Ինձ պարգևեա՛ յապագային:
ԵԼՔ Բ, 1-10 Որ ըզՄովսէս ըսքանչելին
Զի ծնընդէն է ընտրեալ արին
Փըրկեալ ի ջուրց հեղձականին,
Սնուցեր ի տան փարաւոնին.

Գոհ Քեզանով և Քո խոսքով՝
Նրանց խոսքին ընդդիմացավ,
Մինչև հասավ վերջը մարտի
Եվ փորձության մեծ հանդեսի,
Երևացիր, Տեր, մեգի մեջ
Եվ խոսեցիր սիրելուդ հետ,
Պսակ տվիր Դու հաղթողին,
Առողջություն՝ խոր հիվանդին,
Շնորհեցիր կրկին նրան
Կենդանիների ցեղն անբան,
Եվ բնությունը բանական
Պարգևեցիր միասնական:
Եվ խորհուրդն այս ծածկված խորին
Մատնանշում է ապառնին,
Ովքեր մեռան, տես, չեն կորչի,
Այլ կհառնեն օրը վերջին:
Արդ ես խնդրով նահատակի
Եվ համբերող ճգնավորի
Քեզ եմ կանչում և պաղատում,
Հեղում արցունքն իմ լալագին,
Թե Քեզ խընդրի իմ թշնամին՝
Ինձ փորձության տանել մարտի,
Մի տուր ինձ ձեռքն ավազակի,
Մի մատնիր ինձ նրա կամքին:
Ջի ես տըկար եմ, թույլ մարմին,
Հոժար է, բայց անշարժ հոգին,
Անձըս խավար, միտքըս մըթնում,
Կամքով վիհում եմ կամ բանտում,
Բայց Դու տարտամ իմ անձի հետ
Ելիր կըռվի թշնամու դեմ,
Որ հորդորես, զորացնես ինձ,
Թե կըհաղթես չար իշխանին,
Լոկ ցանկությունը իմ բարի
Տեղն ընդունիր Հովբի ջանքի,
Եվ պսակը հաղթանակի
Ինձ պարգևիր ապագային:
Հանց Մովսեսին սքանչելի,
Որն ընտրյալ էր ծընված օրից,
Փըրկված ջըրի մեջ խեղդվելուց,
Սընուցված տանը փարավոնի,

Եւ ի լըրման ժամանակին
Կըրկին ամաց քառասնեկին,
ԵԼՔ Գ, 1-10 Երևեցար, Տէր, ի լերինն,
Բոցով հըրոյ ի մորենին,
Փըրկիչ ըզնա գերեալ ցեղին
Առաքեցեր Իսրայիլին,
Վասն առաջին սըրբոյ ուխտին
Եղեալ առ հօրն Աբրահամին,
Ոչ արձակել փարաւոնին,
Եդիր ըզնա Աստուած նորին
ԵԼՔ Դ, 19-26 Եւ զօրութեամբ գաւազանին
Ետուր նըմա զբան նըշանին:
Հարեր զաշխարհ եգիպտոսին
Տասըն հարուած, որպէս ասին.
Յորում խորհուրդ զենման գառին
Եւ ելք որդւոցն Իսրայիլին:
ԵԼՔ ԺԹ-ԺԵ Բաժանեցեր յերկուս մասին
Զանդունդս խորոց Կարմիր ծովին,
Եւ ըզբնութիւն լուծականին
Կարծրացուցեր իբր արձանին,
Որպէս ծաղկեալ մարգագետին
Էր ճանապարհն անդընդային,
Ընդ որ ոտիւք ընթանային,
Ոչ թանալով գարշապարին:
Եւ զփարաւոն եգիպտացին,
Որ զհետ մըտեալ կառօք նորին,
Ընկըղմեցեր ի մէջ ծովին
Ի յօրինակ Բելիարին:
Իսկ Քո ընտրեալ և սուրբ գընդին
Առաջնորդեալ, որպէս խաշին,
Հորդան ետուր յանապատին
ԵԼՔ ԺԶ, Հըրով լուսոյ և սեամբ ամպին:
32-36 Ետուր նոցա հաց երկնային
Եւ մանանայ հրեշտակային
Տըպաւորեալ ըզՔոյդ մարմին
Ջերկնից իջեալըն կենդանին:
Հարեր ըզվէմն և բըղխեցին,
ԵԼՔ ԶԷ, 5-7 Ջերկոտասան վըտակն արբին,
Ի յօրինակ աղբեր կողին
Առաքելոցըն քարոզին:

Երբ ժամանակը լըրացավ,
Կըրկնակի քառասուն դարձավ,
երևացիր լեռան վրա
Վառվող մորենու բոցերում,
Նրան փըրկիչ գերված ցեղին
Ուղարկեցիր Իսրայելին,
Հանուն առաջին սուրբ ուխտի,
Որ արվեց հայր Աբրահամին.
Նրա Աստծու հըրամանով
Փարավոնը հրեաներին
Բաց չըթողեց եգիպտոսից,
Դու զորությամբ գավազանի
Նրան տվիր բան նշանի,
Ջարկիր երկիրն եգիպտոսի
Տասը զարկով, ինչպես ասվեց,
Աստ խորհուրդն էր զենման գառի,
Ելքը որդոց Իսրայելի:
Բաժանեցիր երկու մասի
Անդունդները Կարմիր ծովի,
Բընությունը հեղուկային
Դարձրիր կարծըր, ինչպես արձան,
Ճանապարհն էր անդընդային,
Ինչպես ծաղկած մարգագետին,
Որով գընում էին ոտքով,
Կրունկները չըթըրջելով:
Եգիպտացի փարավոնին,
Նրա հետ եկած կառքերին
Ընկղմեցիր մեջը ծովի
Օրինակով Բելիարի:
Իսկ Քո ընտրյալ և սուրբ գընդին
Դու վարեցիր, ինչպես հոտին,
Ճամփա բացիր անապատում
Լույսի հըրով և սյամբ ամպի,
Տըվիր նըրանց հաց երկնային
Եվ մանանան հրեշտակային,
Երկնից իջածը կենդանի
Նըմանություն ստացավ մարմնի,
Ջարկեց վեմին, և բըխեցին
Տասներկու վտակ, որ խըմեցին
Առաքյալների քարոզի

Երբեակ պահօք քառասնեկին
ԵԼՔ ԻԳ, 12-18 Մովսէս գոլով ի մէջ միգին,
ԵԼՔ ԺԻ, 9-25 Որպէս կենաց ժամանակին
Ամքըն նորա այսքան թըւին,
Ցուցեր զյետոյս Քո խորըրդին
Թագուցելոյ ի փապ վիմին:
Հեղեր ըզլոյսդ անճառելի
Ի հողեղէն դէմս նորին,
Առեալ զօրէնսն ի տախտակին՝
Գըրեալ մատանցդ աստուածային
ԵԼՔ ԼԲ, 8 Վասն անօրէն անհաւանին
Եւ խըստերախտ ժողովըրդին,
ԵԼՔ ԼԲ, 19 Զոր խորտակէր նա զառաջինն
Ընդ պիղծ որթոյն, զոր կազմեցին,
Առ ի խորհուրդ ծածկեալ իրին
Վասն օրինացն, որ լուծանին.
ԵԼՔ ԼԴ,1... Որպէս երկրորդն, որ հաստատին
Բ ՕՐ. Ժ Քոյում եդեալ անշարժ ուխտին,
Որ կայ և մնայ յաւէտ ի սմին
Մինչ ի կատար յաւիտենին:
ԵԼՔ ԻՋ Հրաման ետուր կազմել նոցին
Ըզզանազան կարգ խորանին,
Ի նմանութիւն Պետրեան վիմին
Կամ գերակայ մօր Սիովնին
Եւ տապանակ Կտակարանին
Յանփուտ փայտից պատեալ յոսկին,
Անապական մարմնոյ Քոյին,
Ի՛աստուածութեանդ օրինակին:
ԵԼՔ ԻԸ, 1... Եւ զպատմուճանն Ահարօնին
Ըզղևտական քահանային
Առ ի խորհուրդ հոգևորին
Զարդարեցեր զերևելին:
Եւ այսքանեօք բարեգործեալ,
Եւս առաւել քան ըզսոսին,
Սակայն որթուն երկիր պագին
ԹՈՒ. Ի֊, 1... Ի Բելբեքովր զոհ մատուցին:
Զմեծըն Մովսէս դառնացուցին
Եւ զԱհարովն անարգեցին,
Ընդ Մադիամ խառնակէին,

Կողի աղբրի օրինակով:
Երեք պահքով քառասունքի
Մովսեսն ընկավ մեջը մեգի,
Տարիները նըրա կյանքի
Հասնում էին քառասունի,
Հետո խորհուրդ ցույց տըվեցիր
Վեմի խորքում թաքնըվածին,
Հեղեցիր լույսդ անճառելի
Դու հողեղեն նըրա դեմքին,
Եվ Օրենքները տախտակին՝
Գըրված մատով աստվածային,
Վասն անօրեն և անհավան
Ժողովըրդի խստաբերան:
Եվ տախտակները խորտակեց
Պիղծ հորթի հետ, որ կանգնեցվեց,
Ծածկված խորհուրդի պատճառով
Եվ օրենքի, որը քանդվեց:
Իսկ երբ երկրորդը հաստատվեց,
Ուխտըդ անշարժ հիմքում դրվեց,
Որը հավետ կա, կլինի
Մինչ ավարտը հավիտյանի:
Հրամայեցիր նըրանց կազմել
Ջանազան կարգը խորանի,
Նմանությամբ Պետրոս վեմի
Կամ ծայրագույն մայր Սիոնի,
Եվ տապանակը Հին ուխտի
Անփուտ փայտից՝ պատած ոսկի,
Քո մարմնի պես անապական
Եվ աստվածությանըդ նման,
Եվ պատմուճանն Ահարոնի՝
Այդ ղևտական քահանայի,
Որպես խորհուրդը հոգեղեն՝
Զարդարեցիր Դու լուսեղեն:
Այսքան բարիք Դու գործեցիր
Եվ ավելին, քան թըվեցի,
Սակայն հորթին երկըրպագին,
Բելբեքովրին զոհ բերեցին,
Մեծ Մովսեսին դառնացրեցին,
Ահարոնին անարգեցին,
Մադիամի հետ խառնակվեցին,

Զորդիս դիւացըն զոհէին,
Մինչև ի սպառ բարկացուցին,
Զներողութիւնըդ շարժեցին.
Հուր ի Յակոբ բորբոքեցին
Եւ բարկութիւն յԻսրայիլին:
Եւ յաւետեաց սուրբ աշխարհին,
Զոր խոստացար Դու տալ նոցին,
Բաց ի յերկուց անդ ոչ մըտին
Վասըն մեղացն, որ գործեցին:
Արդ ես ժըխտողս ամենայնին
Եւ համեմատ չարեաց նոցին,
Որ առաւել առ ի բարին
Ի՛ եմ ապերախտ, քան ըզնոսին:
Նոցա հերձեր ծով ըզգալին,
Ինձ ըզխաւարն աղջամըղջին.
Յայնժամ ծածկեալ զեգիպտացին
Եւ աստ զիշխանըն մահածին.
Նոցա ի տուէ ամպ հովանին
Ի՛ի գիշերի լոյս արփենին,
Իսկ ինձ է լոյս իմաստ բանին
Եւ հովանի է Սուրբ Հոգին:
Անդ մանանայ լուծանելին,
Զի որք կերան մեռանէին.
Եւ աստ մարմին Քո երկնային,
Որ կեանըս տայ ճաշակողին:
ԹՈՒ. Ի, 7-11 Նոքա արբին զջուր վիմածին,
Եւ ես զարիւն վիմիդ կողին:
ԹՈՒ ԻԱ, 4-9 Նոցա կախեալ օձ պղղընձին,
Եւ ես տեսի զկեանսդ ի խաչին:
Նոցա օրէնքըն Մովսէսին
Գրաւորական ի տախտակին,
Եւ ինձ Հոգւոյդ իմաստութիւն
Աւետարանդ աստուածային:
Վասն այսորիկ յոյժ պահանջին
Քան ըզնոցունց յինէն բարին.
Որպէս առակն է ծառային,
ՄԱՏ. ԺԸ, 23-35 Գիտող կամաց ւ՚ոչ գիտողին:
Նոքա յոսկւոյ որթ կազմեցին
Եւ Քո փոխան երկիր պագին,
Եւ ես ի սէր հիւթանիւթին

Որդկանց դևերին զոհեցին,
Մինչև իսպառ բարկացրեցին,
Ներողությունըդ շարժեցին,
Հակոբի մեջ հուր վառեցին
Եվ բարկություն Իսրայելում:
Ներսը ավետյաց սուրբ երկրի,
Որ խոստացար Դու տալ նըրանց,
Երկուսից զատ ցեղ չըմտավ
Մեղքի համար իրենց գործած:
Արդ ես՝ ժըխտողն ամենայնի
Եվ նըրանց պես անոթ չարի,
Որ առավել առա բարի,
Շատ ապերախտ եմ նըրանցից:
Նըրանք անցան ծովն զգալի,
Ես՝ խավարը աղջամուղջի,
Այնտեղ խեղդվեց եգիպտացին,
Այստեղ՝ իշխանը մահածին,
Նրանց ծեգից՝ ամպ հովանի
Եվ գիշերով՝ լույս արևի,
Իսկ ինձ՝ լույսը Աստծո խոսքի
Եվ հովանի ինձ՝ Սուրբ Հոգին:
Անդ մանանա տըվիր հալվող,
Որ ուտողները մեռնեին,
Այստեղ՝ մարմինը Քո երկնային
Կյանք է տալիս ճաշակողին:
Նրանք ջուրն ըմպին վիմածին,
Ես՝ արյունըդ վեմիդ կողի,
Նրանց տըվիր պըղնձե օձ,
Իսկ ես տեսա կյանքըդ խաչին,
Նրանց օրենքն էր Մովսեսի
Արձանագըրված տախտակին,
Իսկ ինձ՝ Հոգու իմաստություն
Ավետարանըդ աստվածային:
Ուստի ինձնից է պահանջվում
Նրանցից շատ լինել բարի,
Ինչպես առակն է ծառայի՝
Հասկացողի, ոչ անգետի:
Նրանք ոսկուց հորթ սարքեցին,
Քո տեղ նըրան խոնարհվեցին,
Իսկ ես ի սեր երկրանյութի

Խոնարհեցայ յանհագ ախտին.
Նոքա քաղցեալ տըրտընջէին,
Վասըն հացին յանապատին,
Եւ ես լըրմամբ հարկաւորին
Միշտ ի խընդիր աւելորդին.
Նոքա զերկիր շաղախէին
Պոռնըկութեամբ Մադիամին.
Ես ըզհոգիս իմ զերկնային
Աղտեղեցի գործովք չարին:
Բայց որ քաւիչ եղեր նոցին,
Տէր իմ գըթած, Հօր միածին,
Եւ դարձուցեր ըզբարկութիւն
ԱՅՍՐՆՋՆ՝ Հայցմամբ մեծի մարգարէին,
ՄՈՎՍԷՍԻ Անցո՛ յինէն զաններելին
Ըզպատուհասն, որ ինձ պահին,
Եւ պարգևեա՛ զըղջումն անձին
Եւ թողութիւն անցեալ յանցին:
Մի՛ արգելցես զիս ընդ բազմին
Յաւետաբեր երկրի Քոյին.
Այլ ընդ երկուցն, որ անդ մըտին,
Մի՛ջ զիս յաշխարհըդ Քո վերին:
ԵԼՔ ԼԳ, 11 Որ ըզՅեսու որդի Նաւին
Ընտրեալ իշխան յետ Մովսէսին,
Այն, որ սընեալ ի խորանին
Եւ ի լերինն էր ընդ նըմին,
Անուանակիր ըսքանչելին
Անուանըդ Քում փըրկականին,
Որում Յովսէ նախ կոչէին
Եւ զկնի Յեսու առձայնէին,
ԵԼՔ ԺԷ, 13-15 Որ յաղթական գոլ ի մարտին
Ընդդէմ ժըպիրի Ամաղէկին,
Մինչ տարածմամբ Մովսէս ձեռին
Գոյր օրինակ Քեզ ի խաչին.
Որով զորդիսն Իսրայիլին,
Զայնս որ ծընան յանապատին,
Ածեր յաշխարհըն Պաղեստին
Ընդ Քո խոստման անսուտ բանին:
ՅԵՍՈՒ Գ Ընդ Յորդանան անցանէին
Տապանակաւ Կտակարանին,
Ջուրքն ի յակունսըն դառնային

Սուզվեցի խորն անհագ ախտի.
Նրանք քաղցած տրտնջացին
Անապատում՝ հանուն հացի,
Իսկ ես ամեն ինչ ունեի,
Բայց ձգտեցի առավելին,
Նրանք հողով շաղախվեցին
Պոռնըկությամբ Մադիամի,
Իսկ ես հոգին իմ երկնային
Կեղտոտեցի գործով չարի:
Բայց Դու քավիչ եղար նըրանց,
Հոր միածին, Տեր իմ գըթած,
Եվ բարկությունդ մեղմեցիր
Խնդրանքով մեծ մարգարեի,
Ինձ էլ ներիր աններելին,
Պատուհասները ինձ հասած,
Եվ պարգևիր զղջում անձիս
Եվ թողություն գործած մեղքիս,
Մի արգելիր բազմության հետ
Ավետաբեր երկիրըդ գալ,
Երկու ցեղի հետ հրեական
Ինձ էլ վերին երկիրըդ հան:
Մովսեսից հետո Հեսուն Նավյան
Ժողովըրդին կարգվեց իշխան,
Նա, որ սընված էր խորանում,
Հետը լեռան մոտ էր կենում,
Անվանակիրն սքանչելի
Քո փըրկչական սուրբ անունի,
Որին Հովսե նախ կոչեցին,
Հետո Հեսու առձայնեցին:
Որ հաղթական էր գոռ մարտին
Ընդդեմ ժպիրի Ամաղեկի,
Երբ պարզած ձեռքը Մովսեսի
Նմանակում էր Քեզ խաչին,
Որով որդիք Իսրայելի,
Որ ծընվեցին անապատում,
Երկիր բերեց Պաղեստինի,
Ըստ Քո խոստման՝ ըստույգ խոսքի,
Հորդանանով նրանք անցան
Տապանակով Կտակարանի,
Ջրերն ակունքն էին դառնում

Ի յօրինակ մարդկան ազգին:

ՅԵՍՈՒ Զ

Եօթըն պարիսպք երիքովին
Ի նմանութիւն խոր դըժոխին,
Յեօթնից շուրջ գալով նոցին
Զերթ ջուր հեղեալ կործանէին:
Եւ զթագաւորս եօթըն ազգին
Որ երեսուն թուովն էին,
Հարեր նովաւ զամենեսին
Կախեալ զփայտէ նըշաւակին:

ՅԵՍՈՒ Ժ, 1-15, 12, 13

Զերագընթաց շարժումն արփին
Զարեգական լուսաբերին
Կացոյց հանդէպ Գաբաւօնին,
Զլուսինն ձորոյն Ելիօնին:
Եւ այլ բազմօք որպէս պատմին
Հրաշագործեալ յայնմ յաշխարհին.
Զոր վիճակեաց ցեղից նոցին,
Ի՛ինք ժամանեաց հարցն առաջին:
Արդ՝ ճըշմարիտ զօրինակին
Հոգւոց փըրկչիդ՝ մարմնականին
Յաղերս ածեմ վասն իմ անձին
Զարդարութիւն գործոց նորին:
Թէպէտ և ոչ նըման նըմին
Արիացայ ընդդէմ չարին,
Այլ մեղկացայ յասպարիսին,
Եղէ հանգոյն վատ ծառային,
Բայց ձեռըն տո՛ւր իմում մարտին
Ընդ անմարմին Ամաղէկին:
Զըգմամբ ձեռին Քո ի փայտին
Ըստ Մովսիսի անդր ի լերին
Հարցես և զեօթ ազգ խորհրդին,

ՅՈԹ ՉԱՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆՄԱՆԵՑՆՈՒՄԷ ՀԵՍՈՒԻ ՋԱՐԿԱԾ ՅՈԹ ԱԶԳԻՆ

Որպէս նովաւ զքանանացին.
Զոր կորըստեանն և զպոռնըկին,
Զարծաթասէրն և ձանձրալին,
Զբարկութիւն, տըրտմականին
Եւ զսնափառ պիղծ հըպարտին:
Կարկուտ քարեայ հոսեալ նոցին
Եւ ըզպիծակ զօրաց Քոյին
Անցո՛ր ընդ գետս այս երկրային
Անթաց յաղթից գարշապարին,
Դարձո՛ անդրէն, ուստի ելին,

Օրինակով մարդկանց ազգի:
Յոթնապարիսպ Երիքովի
Նմանությամբ խոր դըժոխքի
Յոթն անգամ շուրջը շըրջեցին,
Ջերթ ջըրհեղեղ կործանեցին,
Թագավորները յոթ ազգի,
Որ երեսուն հոգի էին,
Ջարկեց նրանց՝ այդ բոլորին,
Կախեց փայտից անարգանքի
Եվ ճեպընթաց շարժումն արփու,
Արեգական լուսաբերի,
Կանգնեցրեց դեմը Գաբավոնի,
Լուսինը՝ ձորում Ելիոնի:
Եվ բազմաթիվ այլ հրաշքներ
Գործեց Հեսուն այն աշխարհում,
Ինչպես Գըրքում է պատմըվում:
Առաջինն ինքն էր հայրերից,
Որ ստացավ այն ցեղերից:
Ճշմարիտ այդ օրինակով
Մարմնականից հոգու Փըրկչիդ
Աղերսում եմ վասն իմ անձի
Արդարությունը նրանց գործի,
Թեև չեղա նըրանց նըման,
Ընդվըզելով ընդդեմ չարին,
Այլ թուլացա ասպարեզում,
Նըմանվեցի վատ ծառային,
Բայց ձեռքըդ տուր ինձ այս մարտում
Ընդդեմ անմարմին Ամաղեկի,
Չգելով ձեռքը Քո խաչին,
Հանց Մովսեսը լեռան կողին,
Լուծիր խորհուրդը յոթ տեսակ,
Քանանացուն բեր օրինակ,
Ինչպես կորըստյան, բոզության,
Արծաթասիրության, ձանձրության,
Եվ բարկության, և տըրտմության,
Սընափառ պիղծ հպարտության:
Քարե կարկտով նըրան զարկիր,
Պիծակներով Քո զորքերի,
Անցկացրու գետն այս երկրային,
Անթաց տակով գարշապարի,
Դարձրու այնտեղ, ելանք ուսկից՝

Յանմահական վայրըս դրախտին.
Պարիսպք մեղաց երիքովին
Դըրամբք փակեալ անյուսալին,
Աղաղակաւ տապալեսցին,
Դրունքն ի հիմանց քանդեալ բարձին.
Եւ յաւետեացդ յաշխարհ վերին,
Յորում մըտեր նախ առաջին,
Հետևեցո՛ հետոց Քոյին,
Ժառանգ լինիլ ինձ վերըստին:
Որ ըստ արդար դատաստանին,
Որով դատիս զազգ երկրածին,
Խնամեալ պահես բոլորովին
Զիւրաքանչիւր ոք ըստ կարգին,
Ընտրեալ եղիր յԻսրայիլին
Յետ Յեսուայ զօրավարին
Ըզդատաւորս ցեղից նոցին,
Ըստ օրինաց դատել զնոսին:
ՂԱՏ. է ԸզԳեդեհովն յաղթող արին,
Որ զՄադիամ հարեր նովին,
Երեք հարիւր զօրականին
Զբիւրըս բիւրոց այլասեռին:
Եւ ըզՍամփսոն անյաղթելին,
Որ յուխտական յորովայնին,
ՂԱՏ. ԺԳ-ԺԶ Այն որ զգիսակս ունէր մազին
Ըզսա Հոգւոյն շնորհացըն եօթնարփին:
Եւ զայլ ոմանս, որ կայ ի Գրին,
Մինչ ի Հեղի՝ յայն ծերունին.
Ա ԹԱԳ. Դ, 18 Այն, որ մեռաւ բեկմամբ ողին
Վասըն գերեալ տապանակին:
Ահա և յիմըս քաղաքին,
Զոր շինեցեր ձեռմամբ Քոյին,
Եդիր դատել դատաւորին,
Զհոգիս այրի՝ մըտաց խըղճին,
Բայց ո՛չ դատեաց ըստ Օրինին,
Ո՛չ դիմացաւ չար ոսոխին,
Այլ մեղկացաւ կամաւ յախտին,
Մատնեաց ի ձեռս աւազակին:
Արդ որ փըրկիչ եղեր նոցին,
Ետուր յաղթել հակառակին,
Տացես և ինձ, Տէր, յաղթութիւն

Դեպ անմահ վայրը դըրախտի:
Մեղքի պարիսպը երիքովի
Փակ դըռներով անհուսալի
Աղաղակով թող տապալվեն,
Հիմքից դըռները կործանվեն:
Ավետյաց երկիրը վերին,
Ուր մտար նախ Դու՝ առաջին,
Քո ետևից թող ես էլ գամ,
Կըրկին նըրան ժառանգ դառնամ,
Որ ըստ արդար դատաստանի,
Որով դատում ես ազգն երկրածին,
Խընամես ըստ ամենայնի
Յուրաքանչյուրին ըստ կարգի,
Հեսու զորավարից հետո
Դու ընտրեցիր Իսրայելում
Դատավորներ նըրանց ազգից,
Որ դատեին ըստ օրենքի,
Գեդեոնին հաղթող դարձրիր,
Որ զարկեց մադիամի ցեղին,
երեքհարյուր զորականով
Այլազգի բյուր բյուրավորին,
Եվ Սամսոնին անհաղթելի,
Որ ուխտ ուներ մոր արգանդից,
Այն. որ գիսակ ուներ մազի,
Որ Հոգու շնորհն էր յոթնարփի,
Ուրիշների, որ կան Գըրքում,
Մինչև Հեղին այն ծերունի.
Նա, որ մեռավ կոտրած ողից
Հանուն գերված տապանակի:
Ահա և այս իմ քաղաքում,
Որ շինեցիր Դու Քո ձեռքով,
Դատել տվիր դատավորին
Հոգիս այրի խըղճի մըտոք,
Բայց չըդատեց նա օրենքով,
Չըդիմացավ չար ոսոխին,
Այլ կամովին ընկավ ախտից,
Մատնըվեց ձեռքն ավազակի:
Դու, որ նրանց եղար Փըրկիչ,
Տըվիր հաղթել ոսոխներին,
Ինձ էլ շընորհիր հաղթություն,

Ընդդիմանալ ախոյանին.
Ուսո՛ դատել որպէս նոքին
Արդարապէս մըտաց զհոգին,
ՄԱՏ. Ե, 26 Զի մի զյետին նաքարակիտն
Պահանջեցայց անդր ի բանտին:
Ա ԹԱԳ. Ա Որ Աննայի լուար ձայնին,
Եւ յամլութեանն ետուր զորդին,
Զոր Քեզ մատոյց ի խորանին՝
Ընծայ զպտուղ որովայնին.
Եւ ես գոչեմ ձայնիւ նորին,
Անշարժ շըրթամբք խորոց սըրտին,
Աղաղակեմ անլըռելին,
Հեծեմ հոգւովըս վըշտագին,
Թէ զանպըտուղ անձս ի բարին
Եւ զպըտղաբերս գործոց չարին,
Պըտղաբերեա բարեաց գործին
Եւ գօսացո զարմատ չարին:
Զախտըս մեղաց ըզբազմածին
Դադարեցո՛ ըստ Փեննային,
Ամուլ հոգւոյս ըստ Աննային
Շնորհեա՛ որդիս յեօթանեկին:
Մեռցին անդամք իմ երկրային,
Կեցցէ հոգիս իմ վերըստին.
Իջցէ ի գուբ չար թըշնամին
Եւ զիս հանցես յերկին վերին.
Որ ըզդաւիթ յեսսէածին
Յորդիս եղեալ ծընունդ վերջին,
Մանուկ խարտէշ գեղեցկագին,
Հովիւ խաշանց անբան հօտին,
Ա ԹԱԳ. ԺԶ, 12,13 Օծեր իւղովն, որ յեղջերին,
Առ ի բեկումն, որ յապակին:
Ի ձեռըն սուրբ մարգարէին
Սամուէլի տեսանողին:
Յորմէ հետէ խաղայր Հոգին
Եւ հովանի լինէր նըմին,
Ա ԹԱԳ. ԺԶ, 19-23 Հընչեր նովաւ զերգ սաղմոսին
Իմաստնապէս ի տասնաղին,
Հալածելով զայսըն ձայնիւ,
Զոր հարկանէր ի Սաւուղին:
Մերժէր զգազանսն երևելիս

Ընդդիմանալ չար թըշնամուն,
Ուսիր դատել նըրանց նըման
Խղճմըտանքով, արդարությամբ,
Որ չըվերցվի ստակը վերջին,
Պահանջվելով մեջը բանտի:
Դու լըսեցիր ձայնն Աննայի
Ամլությանն իր տըվիր որդի,
Որ մատուցեց Քեզ խորանին
Պտուղն ընծա՝որովայնի:
Ես գոչում եմ նըրա ձայնով,
Սըրտի խորքից անշարժ շըրթով,
Աղաղակում անլըռելի,
Հեծում հոգովըս վըշտալի,
Թե ամուլ եմ ես բարիում
Եվ պըտղաբեր՝ չար գործերում,
Պըտղաբերիր գործեր բարի,
Չորացրու արմատը չարի:
Մեղքի ախտերը բազմածին
Դադարեցրու ըստ Փեննայի,
Ամուլ հոգուս ըստ Աննայի
Շընորհիր յոթ անգամ որդի:
Կորչեն անդամներս երկրային,
Կեցցե հոգին իմ վերըստին,
Թող գուբն իջնի չար թշնամին,
Իսկ ինձ հանիր երկինք վերին,
Ինչպես Դավթին հեսսեածին,
Որդիներից որդուն վերջին,
Խարտյաշ մանկան գեղեցկագին,
Հովվին խաշանց անբան հոտի,
Որն օծվեց յուղով եղջերի
Բեկման ժամանակ բաժակի:
Զեռքովը սուրբ մարգարեի,
Սամուել տեսանողի,
Որից հետո շարժվեց Հոգին
Եվ դարձավ նըրա հովանին:
Հընչեցրեց երգը Սաղմոսի,
Իմաստուն ձայնը տավիղի,
Հալածելով ձայնով դևին,
Որ հարվածում էր Սավուղին,
Հաղթեց հըզոր գազաններին,

Զարջ և զառիւծ ի միասին.
Եւ ի խըմբել պատերազմին
Ճակատ ընդդէմ Իսրայելին,
ա թագ. ժէ Վանէր նովաւ Դու ըզնոսին
Առանց զինու պատերազմին.
Քանզի պարսիւ հուվուականին
Դոյզըն քարիւ հեղեղատին
Հարեր զճակատ Գողիաթին
Բարձեր նախատ յԻսրայելին.
Եւ ի նեղչացն, որոց հասին
Բազմադիմի փորձանք նըմին,
Ապրեցուցեր զկեանըս նորին
Եւ կացուցեր գըլուխ նոցին:
Ո՛չ ընտրեցեր զազգն եփրեմին,
Ո՛չ ըզխորան Մանասէին,
ա թագ. ժէ, 58 Այլ գյուդայեան Բեթլէհէմին,
Յորմէ և Դու առեր մարմին,
Ետուր նըմա պարգև կըրկին
Յոյժ բարձրագոյն քան ըզբնաւին,
Արքայ օծեալ Հրէաստանին
Եւ մարգարէ աստուածային.
Թէպէտ էանց ըստ հրամանին,
Սխալեաց կամաւ ի յերկոսին,
բ թագ. ժա Պոռնըկեցաւ ընդ Բերսաբին,
Ի՛եհեղ զարիւն Ուրիային.
Զի յայտ լիցի թէ է մարմին,
Ի՛ունի բնութիւն նա մարդկային.
Եւ ո՛չ օտար կամ երկնային,
Այլ ի ծնընդոց հողեղինին:
Նա և ի յոյս յանցաւորին,
Ետուր գըթել յայնժամ մեծին.
Զի մի մեղօքն անյուսասցին,
Այլ որպէս զնա փութով դարձցին:
Եւ զիս առեր մարդ հողածին
Ի յԱդամայ որդւոց վերջին,
Ծընունդ գոլով գիշերային,
Ախտիւք գերեալ և աղախին,
Ծընար հոգւով զիս վերըստին,
Ստեղծեր նորոգ յաւազանին.
Օծեր իւղով Քո երկնային

Արջին, առյուծին միասին,
Եվ երբ կազմել էին ռազմի
Ճակատ ընդդեմ Իսրայելի,
Նըրա ձեռքով Դու վանեցիր
Առանց զենքի պատերազմի,
Քանզի հովվի պարսատիկով,
Հեղեղատի քիչ քարերով
Խըփեց ճակատին Գողիաթի,
Սըրբեց ամոթն Իսրայելի
Նեղիչներից, որոնք բերին
Նըրան փորձանք բազմադիմի,
Կյանքը նըրա Դու ապրեցրիր,
Առաջնորդ ազգին կարգեցիր:
Չընտրեցիր ազգը Եփրեմի,
Ոչ խորանը Մանասեի,
Այլ՝ Բեթլեհեմը Հուդայի,
Որից և Դու առար մարմին,
Տըվիր նըրան պարգև կըրկին
Եվ բարձրացրիր վեր ամենքից.
Օծված արքա Հրեաստանի
Եվ մարգարե աստվածային,
Թեպետ հըրամանը խախտեց,
Կըրկընակի հանցանք գործեց,
Պոռնկացավ հետը Բերսաբեի,
Հեղեց արյունն Ուրիայի,
Որ պարզվի, որ ունի մարմին,
Ունի բընություն մարդկային,
Եվ ոչ օտար կամ երկնային,
Այլ ծընունդով հողեղենի,
Հանցավորին հույս տըվեցիր,
Մեծ գըթություն բաժանեցիր,
Որ մեղքերից չըվըհատվեն,
Այլ նըրա պես շուտով շըտկվեն:
Ինձ էլ դարձրիր մարդ հողածին
Ադամորդիներից վերջին,
Որպես ծընունդ գիշերային,
Ծընված երկունքով և ծառա,
Ծընեցիր հոգով ինձ կըրկին,
Ավազանում նորոգեցիր,
Յուղով երկնային օծեցիր

Յորդեգրութիւն Հօրըդ վերին:
Բայց ես անկայ յախտըս կըրկին,
Եղեալ ծընունդ մեղսասիրին,
Զօծումըն սուրբ աստուածային
Աղտեղեցի գործովք չարին:
Արդ պաւլատիմ երգով նորին,
Հայցեմ ի Քէն ըստ սաղմոսին.
ՍԱՂ Ծ (ԾԱ), 10 Սիրտ սուրբ հաստեա յիս վերըստին,
Յորովայնիս զուղիղ հոգին.
Ինձ լըսեցո զլուր Քո ձայնին
Զուրախարարն և զցընծալին:
Յորժամ հընչէ փողն ահագին,
Ազդել ոսկերս իմ ցաւագին,
Տէր, ի մեղաց դարձո զհոգիս,
Պարտեացն իմոց գիր ջընջեսցին
Եւ յարենէ գոյն յորդանին
Մաքրեա յիմոց և յօտարին:
Յայնժամ շրթունք հոգւոյս բացցին,
Բերանս օրհնել արժանասցին.
Եւ զուարակիդ զենման գառին
Հաղորդ գըտայց պատարագին:
Որ յօրինակ Քեզ ընտրեցեր
Զորդի մեծի մարգարէին
ԸզՍաղովմոն խաղաղութիւն,
Ի քէն բերեալ երկնաւորին,
Նա ի հօրէն իւր սեփական
Զաթոռն առեալ ըզհայրենին,
Որպէս և Դու Հօր միածին,
Ո՛չ յօտարուստ կամ արտաքին,
Գ ՔԱԳ. Ե, Զ, Է Տաճար շինեաց նա երկրային,
Դու ըզբնութիւնըս մարդկային.
Նըմա տըւաւ իմաստ բանին,
Բայց Դու տըւող անճառ շնորհին,
Նա ժողովող յոգն իմաստին
Անուանեցաւ յԻսրայէլին,
Իսկ Դու զցրուեալ ազգ երկրածին
Ժողովեցեր ի միասին.
Գ ՔԱԳ. Ժ Նըմա դըշխոյն հարաւային
Եկն ի տեսիլ բաղձմամբ սըրտին,
Քեզ քառանկիւն կողմ աշխարհի

Որդեգրությամբ Քո Հոր վերին:
Բայց ախտի մեջ ընկա կրկին,
Եղա ծընունդ մեղսասերի,
Օծումըդ սուրբ աստվածային
Աղտոտեցի գործով չարի,
Արդ խընդրում եմ Դավթի երգով,
Հայցում եմ Քեզ սաղմոսներով,
Ոգեպընդիր ինձ վերըստին,
Ի ծընե ճըշմարիտ հոգին:
Ինձ լըսեցրու լուրը ձայնիդ
Ուրախալի և ցընծագին,
Ուր երբ հընչի փողն ահագին,
Ջարկի ոսկրերիս ցավագին,
Մեղքից հանիր, Տեր, իմ հոգին,
Որ ջընջվի գիրը պարտքերիս,
Եվ արյունից որդան գույնի
Իմ և այլոց մեղքը ջընջվի:
Շըրթերն հոգուս բացվեն այնժամ
Եվ օրհնության արժանանան,
Թող հաղորդվեմ պատարագիդ,
Ջոհաբերման զենման գառիդ:
Որ օրինակ Քեզ ընտրեցիր
Որդուն Դու մեծ մարգարեի,
Խաղաղության Սողոմոնին,
Երկնավորիդ օրինակին,
Նա, որ հորից իր սեփական
Վերցրեց աթոռը հայրական,
Ինչպես Դու ես՝ Հոր միածին,
Ոչ օտար ես, ոչ արտաքին:
Տաճար շինեց նա երկրային,
Դու՝ բնությունը մարդկային,
Նըրան տըրվեց իմաստ բանի,
Դու՝ տըվող անճառ շնորհի,
Նա՝ ժողովող իմաստության
Իսրայելի մեջ հըռչակվեց,
Իսկ Դու ցըրված ցեղը մարդկանց
Ժողովեցիր մեկտեղ այդպես:
Նըրան դըշխոն հարավային
Եկավ այցի բաղձմամբ սըրտի,

Անտեսաբար երկիր պագին:
Եւ ես շնորհաց Քոց ընդ նըմին
Եղէ ստացող մի քանքարին,
Ոչ պահելով զայն ընդ վատին.
Այլ կորուս,ւ ըզգլուխ նորին:
ՄԱՏ. ՐԵ. 14.30 Զի որպէս նա զփառս անեղին
Փոխեաց փառաց եղծականին,
Նոյն ես ըզլոյս շնորհաց Քոյին
Փոխարկեցի ընդ խաւարին:
Արդ եթէ նա վասըն յանցին
Տուժիւք պատժեալ յօրինակին,
Զինչ ունիմ յոյս թշւառս անձին
Կորուսողիս ըզճշմարտին:
Եւ թէ նորա գոլ թողութիւն
Երկբայելի զըղջմամբ սըրտին,
Ինձ արդարև անյուսալին
Բարկացելոյդ Հօր հաշտութիւն:
Բայց որ գըթածդ ես յամենից
Հեղ յիս ըզսէր շնորհաց Քոյին,
Իմաստութիւն Հօրըդ վերին,
Իմաստնացո զիս յերկոսին,
Յարդիւնաբար գործնականին
Եւ ի յիմաստ տեսականին.
Զի կարացից լուսով շնորհին
Երկու աչօք նայել յերկին:
Քանզի է սկիզբն իմաստութեան
ԱՌԱԿ Ա. 7 Երկիւղ Քո սուրբ ըստ Առակին.
Եւ գիտութիւն առանց նորին,
Առիթ չարեաց է ունողին:
Այսուհիկ բազումք յանդիմանին
Եւ Սաղովմոն նախ առաջին:
Սոյն իմս և խուն իմաստութիւն,
Անօգտակար առանց սանձին:
Թողից զյոլովս, որ ըստ կարգին,
Զի ոչ ներէ բանըս բազմին.
Ըզմարգարէս և զթագաւորս
Եղեալ ի տան Հրէաստանին,
Որ ի յերկուս եղեալ բաժին
Ի Յուդային և յեփրեմին:
Զի և Գիրք սուրբ աստուածային

Քեզ չորս կողմերը աշխարհի
Դեռ չըտեսած՝ երկըրպագին:
Նըրա հետ քո շընորհներից
Եղա ստացող մի քանքարի,
Այն էլ, ծուլլ եմ, չըպահելով,
Կորցրի իսպառ հեծեծելով,
Եվ ինչպես փառքն անմահական
Փոխեց փառքով նա եղծական,
Լույսն այդպես քո լույսը շնորհների
Փոխարկեցի ես խավարի:
Արդ եթե նա իր հանցանքով
Պատժվեց իբր օրինակով.
Էլ ինչ հույս իմ թըշվառ անձին,
Ճըշմարտությունը կորցնողին:
Եթե նըրա մեղքը ներվի,
Երբ զըղջումն է կասկածելի,
Հույս չունեմ ես արդարապես,
Թե բարկացած Հայրըդ հաշտվի:
Բայց Դու՝ գըթածըդ ամենից,
Շընորհներիցըդ սեր տուր ինձ,
Հորըդ վերին իմաստությամբ
Իմաստնացրու երկու գըծով՝
Արգասաբեր գործնականով,
Տեսականի իմաստներով,
Որ կարենամ լույսով ձիրքիս
Երկու աչքով նայել երկինք,
Քանզի սկիզբն է իմաստության
Քո սուրբ երկյուղն ըստ Առակի,
Եվ գիտությունն առանց ահի
Չարի պատճառն է գիտունի,
Ուստի շատերն են կըշտամբում
Նախ և առաջ Սողոմոնին.
Իմաստությունս էլ քիչ, որ կար,
Անօգուտ էր առանց սանձի:
Մեղքը ոմանց նա կըթողնի,
Բայց չի ների շատ շատերի:
Մարգարեներ, թագավորներ
Եղան տանը Հրեաստանի.
Որ երկուսի բաժանվեցին՝
Մեկն Հուդային, մյուսն՝ Եփրեմին:

Յառաջագոյն մեզ պատմեցին,
Զիւրաքանչիւր վարըս նոցին
Ի զգուշութիւն մեզ ծանուցին.
Զոմանց բարեաց վըկայեցին,
Զի յօրինակ մեզ եղիցին,
Զայլոց ըզչար վըկայեցին,
Զի մի նըման լիցուք նոցին:
Եւ ես մերժեալ յինէն զբարին,
Չբերի զլաւացըն տիպ յանձին,
Այլ ընտրելով զներհակ նորին
Եղէ նըման յոյժ վատթարին:
Եւ կորուսի զիմաստութիւն,
Զոր ընկալայ բանիւք Քոյին:
Արդ Քեզ գոչեմ զաղերս բանին
Դ ԹԱԳ. Ի, 1-6 եզեկիայ թագաւորին,
Բ ՄՆԱ. Լ, 20 Ի նեղութեանց փըրկել կըրկին,
Որպէս և յայն ժամ ըզնոսին
Ի յասորւոց բըռնաւորին,
Դ ԹԱԳ. Թ, Ի սպառնալեացն Ըռափսակին,
1-8 Եւ ի յախտիցըն սաստկագին
Հայցմամբ մեծի մարգարէին:
Հարցէ ի սպառ սուր հրեշտակին
Ըզբազմութիւն լէգէօնին
Զանմարմնական, ւ'որք ի մարմին
Ընդ եկեղեցւոյ Քում մարտընչին,
Եւ զախտ մեղաց մահաբերին
Տագնապելոյս ջերմամբ նոցին
Բարձցես յինէն հըզօր դիւրին,
Որպէս կարող յամենայնին:
Դարձի զըստուեր երեկոյին
Ի լոյս կենաց առաւօտին,
Որպէս նովաւ օր միակին
ԸՍՏ ԵՐԵՄԿ. Դարձեալ եղև տիւ երրակին.
ՄԱՐԳԱՐԵԻ Որ էր նըշան երեք լուսոյն
Երրորդութեանդ երրեակ անձին,
Նաև ծագման Քո և դարձին
Եւ գալըստեանդ ի յերկրորդին:
ԵՍ. ԼԸ, 9-20 Բայց իմ բարձեալ՝ որպէս նորին,
Աւուրք կենաց հոգևորին՝
Մերձ եմ ի դրունս դըժոխոց,

Գըրքերը Սուրբ աստվածային
Առաջինը մեզ պատմեցին,
Ամեն մեկի վարքն առանձին
Զգուշությամբ մեզ հայտնեցին.
Ոմանց բարին վըկայեցին,
Որ օրինակ մեզ ծառայեն,
Ոմանց էլ վատը նըշեցին,
Որ նըրանց մենք չընըմանվենք:
Ես մերժելով ինձնից բարին՝
Օրինակ չընտրեցի լավին,
Այլ հակառակն ես արեցի,
Նըման եղա հույժ վատթարին,
Իմաստությունն իմ կորցըրի,
Որ հասկացա ես Քո խոսքից:
Քեզ կանչում եմ աղերսելով՝
Նման եզեկիա արքային,
Որ ինձ փըրկես նեղությունից,
Ինչպես նըրան այն ժամանակ
Սպառնալիքներից Ռափսակի,
Ասորիքի բըռնավորի,
Եվ ախտերից մեծ և ուժգին,
Խընդրանքով մեծ մարգարեի,
Ջընջիր սըրով հըրեշտակի
Հոծ խըմբերը չար Լեգեոնի,
Որ անմարմին և մարմընում
Եկեղեցուդ դեմ են ելնում,
Եվ մահաբեր ախտը մեղքի՝
Նըրա ջերմը իմ մարմընի
Հանիր ինձնից, Հըզոր, դյուրավ,
Որ հասու ես ամեն ինչի:
Փոխիր ստվերը երեկոյի
Առավոտյան կենաց՝ լույսի,
Ինչպես նրա օրը միակ
Յերեկ դարձավ նորից եռյակ,
Որ նըշան էր երեք լույսի,
Երրորդության եռյակ անձի,
Նաև Ծնընդի Քո և դարձի
Եվ Քո երկրորդ Մեծ գալուստի:
Օրերըս հոգևոր կյանքի
Հասան նըրա պես ավարտի,

Եւ ստուերք մահու զիս ծածկեցին:
Ի յիշատակ թողում յետին
Զհամբաւ չարեաց զպարսաւ անձին,
Կամաւ մատնէր չար ոսոխին,
Որ ի յառիւծ նըշանակին.
Այն, որ մանրեաց զոսկերս խորին,
Եւ խորտակեաց զխորհուրդ սըրտին
Ի ծնընդենէ առաւօտին
Մինչ ի գիշեր մահու ստուերին:
Եւ ես տըկար որպէս ծիծառն,
Անդիմադարձ իբր աղաւնին,
Տեսեալ ճըչեմ առ թշնամին
Նըւաղ ձայնիւ որպէս մընչիւն:
Զաչս ի լուսոյ խաւարեցին
Եւ կուրութեամբ զիս տուժեցին.
Յաշխարհ նայիլ ինձ ուսուցին
Եւ ոչ ի լոյսդ աստուածային.
Արդ ինձ շնորհեա, Տէր, ընդ նըմին
Մերժիլ յախտից ցաւոց անձին,
Դարձի զմեղացըս դառնութիւն
Ի քաղցրագոյն խաղաղութիւն:
Ընդ որս և զիմ փոխարկեսցես
Ի պըտղաբեր զամուլ հոգին,
Առ ի ծնանել զարդարութիւն
Զորդիս լուսոյ հոգևորին.
Զի անդադար Քեզ օրհնութիւն
Մատուցանեմ մինչ ի մարմին,
Եւ ընդ հրեշտակս յապագային
Փառըս հընչել ի տաճարին:
Եւ ընդ ամաց երից հընգին
Զոր յաւելեր ի կեանս նմին,
Շնորհեա և ինձ զանթըւելին
Յանզրաւական յաւիտենին:
Զայնիւ մաղթեմ Մանասէին
Զըղջացելոյ յանցաւորին,
Որ ըզպատկեր չորեքդիմին
Կանգնեաց ի տան սըրբարանին,
Եհեղ զարիւն մարգարէին,
Սղոցիւ հերձեալ նըման փայտին
Եւ ինքն էառ զդարձուած չարին,

Դ ԹԱԳ. ԻԱ, 1-17. Բ ՄՆԱՑ. ՀԳ, 1-20

Մոտ եմ դըժոխքի դարբասին,
Մահու ստվերներն ինձ ծածկեցին:
Հիշատակ եմ թողնում վերջին
Չարի համբավ՝ ամոթ անձիս,
Ինձ մատնեցի չար ոսոխին,
Որ շատ նման է առյուծի,
Որ ոսկերքըս մանրեց խորքի,
Խորտակեց հավատը սըրտիս
Իմ ծընընդյան առավոտից
Մինչ գիշերը մահանըման:
Եվ ես տըկար, ծիծառն ինչպես,
Չըդիմադրող աղավնու պես,
Դեռ չըտեսած իմ թըշնամուն՝
Նըվաղ ծըվում եմ, հանց մընչյուն:
Աչքերս լույսից խավարեցին
Եվ կուրությամբ ինձ պատժեցին,
Ինձ աշխարհին սովորեցրին,
Բայց ոչ լույսիդ աստվածային:
Ծընորհիր ինձ նըրա հետ, Տեր,
Ապաքինել ցավ ու ախտեր,
Դարձրու դառնությունը մեղքիս
Խաղաղություն քաղցր ու հանգիստ:
Ընդ որում իմ ամուլ հոգին
Թող պըտղաբեր դառնա կըրկին,
Արդարություն որ երբ ծընվի
Եվ հոգևոր որդիք լույսի,
Թող անդադար Քեզ օրհնություն
Մաղթեմ, քանի շունչ կա մարմնում,
Հրեշտակաց հետ գալիքում
Ընդչեցնեմ փառքըդ տաճարում:
Եվ երեք հընգյակ տարվա հետ,
Որ հավելվեց նրա կյանքին,
Ինձ էլ շնորհիր անթըվելին,
Անվախճան կյանքն հավիտյանի:
Զայնով եմ կանչում Մանասեի,
Այդ զղջացող հանցավորի,
Որ տաճարում սըրբարանի
Արձան դըրեց չորեքդիմի,
Արյուն հեղեց մարգարեի,
Սղոցով կըտրեց նըման փայտի

Կապեալ յերկաթ ի տան բանտին:
Գոչէր լալով այրմամբ սըրտին,
Արտասուելով թախծեալ անձին,
Աղաղակէր յաղերս բանին,
Բաղխէր ըզկուրծս ողորմագին.
Ամենակալ ստեղծող գոյից,
Տէր և Աստուած Աբրահամին
Իսահակայ՝ Քում ծառային
Եւ Յակոբայ սըրբասիրին,
Որոց չեդեր ապաշխարել,
Զի վերք մեղաց ոչ ունէին.
Այլ իմ ցաւոցս է սպեղանին,
Զի քան զաւազ շատ է ծովին:
Չեմ արժանի նայիլ յերկին,
Զի կափուցի զաչս ի բարին.
Եւ կորացայ յաշխարհ ստորին,
Կապեալ մեղօք իբր յերկաթին:
Եւ կանգնեցի զպատկեր չարին
Հանդէպ աչացս ըզտիպ ախտին.
Այժմ ի խոնարհ Քեզ արկանեմ
Զծունըր ծընկաց և ըզսըրտին:
Բայց եմ անձամբըս ցաւագին,
Լեզուաւս ասեմ՝ մեղայ կըրկին.
Թող ինձ, Տէր, թող մինչ ի մարմին,
Զի մի կորեայց ի մեղս անձին.
Մի դատեցայց ընդ սպանողին
ՍԱՏԱՆԱՅԻ Ընդ փայլականըն ստորանկին.
Այլ ընդ զուարթունսն արժանացո՝
Փառատրութեան անվախճանին:
Գ ԹԱԳ. ԺԷ-ՒԱ Յաղերս բանի քեզ ընդ բազմին,
Դ ԹԱԳ. Ա-Բ Ըզվարս ածեմ զեղիային,
Զայնմ, որ յերկրի էր երկնային,
Իբր անմարմին կոյս ի ստուերին.
Որ կերակրիւր ի յանձաւին
Ի յառգաւուց բերեալ հացին.
Շրջէր մորթովք մեռեալ մաշկին
Մոլորական յանապատին.
Յիշավանեալ առ կինն այրին
Եւ զլիութիւն շնորհող նըմին,
Ի յօրինակ կենաց հացին

Եվ ինքը ետ դարձավ չարից,
Շղթայակապ ներսում բանտի,
Լալիս էր զիլ այրմամբ սըրտի,
Ողբալով անձն իր վըշտալի,
Աղաղակում աղերս խոսքի,
Կուրծքն էր բախում ողորմագին:
Ամենակալ ստեղծող գոյի,
Տեր և Աստված Աբրահամի,
Ու Քո ծառա Իսահակի,
Նաև Հակոբ սըրբասերի,
Որոնց չեղավ ապաշխարանք,
Քանզի մեղքի վերք չունեին,
Իմ ցավին է պետք սպեղանի,
Ջի ավազից շատ է ծովի,
Չեմ արժանի նայել երկինք,
Ջի փակեցի աչքըս բարուց,
Հակվեցի աշխարհն ստորին,
Կապված մեղքով, հանց երկաթով,
Եվ կանգնեցրի կուռքը չարի,
Աչքիս առաջ տիպը ախտի:
Այժըմ խոնարհ դեմդ եմ ընկնում,
Ծունըր գալիս, սիրտ խոնարհում,
Սակայն անձամբ և ցավագին
Ասում եմ ես մեղա կըրկին:
Թող, Տեր, մարմնի մեջ եմ քանի,
Մեղքերում անձըս չըկորի,
Սպանողի հետ ինձ մի դատիր
Կայծակներով կործանվածի,
Հրեշտակաց հետ արժանացրու
Օրհներգությանն անվախճանի:
Շատերի հետ իմ աղերսում
Ես եղիայի վարքն եմ բերում,
Նա, որ երկրում էր երկնային,
Ստվերի մեջ՝ կույս անմարմին:
Կերակրվում էր անձավում
Ագռավների բերած հացով,
Շըրջում մորթե վերարկուով
Անապատում թափառելով,
Մինչ այրիի տունը իջավ
Եվ լիություն շնորհեց նրան,

Եւ յօծութիւն Հոգւոյդ շնորհին.
Ջփակող բանիւ Քոյով զերկին
Եւ ըզբացողըն յետ զոհին.
Ջոր ի սեղան ողջակիզին
Լըւար նըմա հրով երկնային.
Այն որ անձրև յետ երաշտին
Իջոյց նըման իջման Քոյին,
Որով պասքեալ ազգ մարդկային
Ջցօղ կենաց Հոգւոյն արբին:
Գ ԹԱԳ. ԺԸ, 4...., Ի սպառնալեաց Եզաբէլին
ԺԹ, 8... Փախեաւ պահօք քառասնեկին.
Ջի տկարութիւն բնութեանս յայտնին,
Թէ չէ օտար հողանիւթին:
Ել ի Քորեբ ըստ Մովսիսին,
Եմուտ ի յայրն ըստ հրամանին.
Էառ հընչիւն սաստիկ հողմին,
Նըման անցեալ ջըրհեղեղին:
Ետես և զհուրըն Սոդոմին,
Յորում Դու ոչ, Տէր, ի նոսին.
Ջի բարկութեամբ հանդերձ էին
Եւ ոչ սիրոյ ցուցման մեծին:
Գ ԹԱԳ. Բ, 1-11 Լըւաւ և ձայն ըզքաղցր օդին,
Ի տիպ իջման Քո մեղմագին,
Որ զհեզաբար գալուստ Քոյին
Նըշանակէր յամըս վերջին:
Նոյն որ մաշկաւ մեռեալ ախտին
Ջեղիսէոս կոչեաց յանդին,
Որպէս և Դու զվէմ հաւատին
Եւ սուրբ զորդիսըն Ջեբեթին,
Եւ զՅորդանան ցելեալ նովին
Անցին ցամաք ըստ Յեսուին:
Հրեղէն կառօք հանէր յերկին,
ՋՀոգին ետուր միւսոյն կըրկին.
Որ Համբարձման Քո գուշակին,
Տալ ըզհոգին մետասանին.
Եւ Քո փոխան լինիլ նոցին
Եւ յետ նոցա, որք ըստ կարգին,
Ջի որպէս նա վարդապետին
Եղև նըման ամենևին,
Եւ Քեզ ընտրեալքն ի յաշխարհէ

Կենաց հացի օրինակով
Եվ օծության՝ Հոգու շնորհով,
Որ Քո խոսքով երկինքը փակեց,
Պատարագից հետո բացեց,
Ողջակեզի սեղանի մոտ
Լսիր նրան երկնային հըրում,
Որ երաշտից հետո անձրև
Իջավ նըրան Քո իջնելով,
Որով պապակ ազգը մարդկանց
Արբեց ցողով Հոգու կենաց,
Սպառնալիքից եզաբելի
Փախավ պահքով քառասնօրյա,
Որ հայտնըվի մեր բընության
Տըկարությունըն անսահման,
Ոչ թե օտար հողանյութի:
Մովսեսի պես Քորեբ ելավ,
Հըրամանով այրը մըտավ,
Լըսեց ձայնը սաստիկ հողմի,
Նըման անցյալ ջըրհեղեղին,
Տեսավ և հուրը Սոդոմի,
Չի Աստված էր բարկությամբ լի,
Տեր Դու սակայն նրանց հետ չէիր.
Լըսեց և քաղցըր ձայնն օդի,
Քո վայրէջքի պես մեղմագին,
Որ մեղմասահ գալուստը Քո
Ցույց էր տալիս վերջին տարին:
Նա, որ մեռավ վերարկուով,
Եղիսեին հետն առնելով,
Ինչպես Դու հավատի վեմին
Եվ Զեբեդի որդիներին,
Հորդանանը բացին նըրանք,
Հեսուի պես անցան ցամաք,
Հըրե կառքով հասցրիր երկինք,
Հոգին մյուսին տըվիր կըրկին,
Քո Համբարձման սուրբ գուշակին,
Երբ Քո տեղը տասնըմեկին
Այնուհետև տըրվեց Հոգին,
Իսկ ավելի ուշ՝ ըստ կարգի:
Քանզի և նա մեծ ուսուցչին
Նըման եղավ ամբողջովին,
Քո ընտրյալները աշխարհից

Ի գործ հրաշից նըմանեցին:
Գ ԹԱԳ. Բ, 12-14, 23-25 Նա մաշկեկաւ սփածեալ շնորհին
Եհերձ ըզջուր Յորդանանին,
Սոքա զմեղաց ծովըն հերձին
Քարոզութեամբ կենաց բանին:
Նա ըզմանկունսըն Բէթէլին
Տապաստ էարկ վասն այպանին.
Սոքա ըզծընունդ մեղաց չարին
Սըրով Հոգւոյն կոտորեցին:
Գ ԹԱԳ. Գ Նա յամլութեան շնորհեաց զորդին
Զոր և յարոյց ըզմեռեալ դին,
Գալով առ նա եօթանեկին,
Ըստ գալըստեան Քո ի յութին.
Եւ յետ մահուն կենդանութիւն
Ետուն ոսկերքն ի տապանին,
Ի տիպ մահուան Քո ի վիմին,
Որով յարեալ մեք վերըստին:
Սոքա զամուլ զեկեղեցին
Ի բազմածնունդս փոխարկեցին,
Եւ ըզմեռեալըս յարուցին
Ի Յարութեան հաւատ վերջին.
Նա զդառըն ջուրսն երիքովին
Փոխեաց ի քաղցր արկմամբ աղին.
Սոքա ի Քեն աղ անուանեալ,
Զանհամ բնութիւնս անուշեցին,
Գ ԹԱԳ. Գ Նա զնէեման Դամասկացին
Յորդանանաւ սըրբեաց յախտին,
Սոքա ըզսեռըս մարդկային
Աւազանին ջուրբ մաքրեցին:
Արդ Քեզ հաճոյ վարուք նոցին
Զիմ փոփոխեա զվարս ի բարին
Եւ փոխադրեա յերկրէ յերկին
Զհոգիս մարմնով յապագային:
Հայցմամբ կառօք ամբարձողին,
Զոր ի Թաբոր բերեր լերին,
Հանդերձելոց հանդերձողին
Կարապետի Քո յերկրորդին.
Այրի հոգւոյս տուր լիութիւն.
Որպէս նոքօք առ երկոսին.
Եւ մաշկեկաւ մեռելութեան

Նմանվեցին հրաշքի գործին:
Մեջքին կապած թիկնոց ձիրքի՝
Ջուրը ճեղքեց Հորդանանի,
Սրանք էլ ծովը մեղքի կըտրին
Քարոզությամբ կենաց բանի:
Նա Բեթելի մանուկներին
Ջարկեց, քանզի ծաղրում էին,
Սրանք էլ ծնունդը չար մեղքերի
Հոգու սրով կոտորեցին:
Նա ամուլին շնորհեց որդի,
Ապա հարուցեց մեռյալ դին,
Գալով մոտը օրն յոթերորդ,
Ինչպես եկար օրն ութերորդ:
Մահից հետո կենդանություն
Առ՛ան ոսկերքը տապանում,
Ինչպես մահըդ շիրմում քարի,
Որով հառնեցինք վերըստին,
Նրանք ամուլ եկեղեցին
Բազմածընունդ դարձըրեցին,
Մեռելերին կենդանացրին
Հարության հավատով վերջին,
Նա դառ ջուրը երիքովի
Քաղցըր դարձրեց աղ լըցնելով,
Սըրանք Քեզնից աղ կոչվեցին,
Անհամությունն անուշ դարձրին,
Նա Նեեման Դամասկացուն
Փըրկեց ախտից Հորդանանով,
Սըրանք տեսակը մարդկային
Ավազանի ջրով մաքրին:
Արդ Քեզ հաճո վարքով նըրանց
Փոխիր վարքըս դեպի բարին,
Եվ փոխադրիր երկրից երկինք
Գալիքում մարմինն իմ և հոգին,
Հայցմամբ կառքով համբարձվողի,
Որին Թաբոր լեռ բերեցիր,
Հանդերձյալը պատրաստողի
Եվ Քո երկրորդ Կարապետի,
Այրի հոգուս տուր լիություն
Նմանությամբ այն երկուսի
Եվ թիկնոցով մեռելության

Անցո ընդ գետս այս երկրային:
Ըզդառնորակ մեղաց համին
Փոխեա ի քաղցր և ի բարին
Անապական աղիւ բանին,
Զոր յիս արկցես ըստ առակին:
Յարր զհոգիս մեռեալ ախտին,
Որպէս նոքօք զերիս մարմին.
Մաքրեա՛ ըզբոր մահու մասին
Ըստ ասորւոյ Նէեմանին.
Զիս վերածեա ըստ տապարին,
Փայտիւ Քոյոյ կենաց կարթին.
Եւ բիբք աչաց հոգւոյս բացցին,
Ըստ պատանւոյն յիմանալին:
Տո՛ւր աղեղամբ ինձ հրզօրին
Հարուլ ըզսիրտ Բելիարին,
Որպէս և նա՛ ի վախճանին
Նետիւք նըշան ետ արքային:
Տացես և ինձ արիութիւն
Նետիւք խոցել զիմ թըշնամին
Եւ ապրեցայց հաղբից նորին,
Յորոգայթէ չար որսողին:
Ինձ յօրինակ պարտ է յիշել
Եւ զգերութիւն Բաբիլովնին,
Յորժամ զուխտիւ սուրբ Օրինին,
Զոր ասացեր նոցա անձին,
Ածեր պատիժս ի ծոց նոցին,
Յաւուր վրիժուց գըթեալ ոտին՝
Ըզսպառնական լըցեալ բանին,
Զոր աւանդեաց Մովսէս նախկին:
Քանզի արքայ քաղդէացին
Եմուտ յերկիր Հրէաստանին,
Զերուսաղէմ տապալեցին,
Զորդիս նորա խողխողեցին.
Զտաճարըն սուրբ հըրով լուցին,
Ըզսըրբութիւնսըն պղծեցին,
Եւ զօրիներգուսըն Սիովնին
Ի գերութիւն խիստ վարեցին.
Որք ի յուռիսըն կախէին
Սուրբ զերգարանըս տաճարին,
Եւ անդադար նըստեալ լային

Ղ ԹԱԳ. ԺԷ, 17-24
Ղ ԹԱԳ. Գ, 10-27
Ղ ԹԱԳ. Դ, 18-37
ԺԳ, 20-21
Ղ ԹԱԳ. Ե, 1-14
Ղ ԹԱԳ. Զ, 5-7
Ղ ԹԱԳ. Թ
Բ ՄՆԱՑ. ԼԶ.
Ա ԵԶՐ. Ա

Անցկացրու գետն այս երկրային:
Եվ դառնորակ համը մեղքի
Փոխիր դեպի քաղցր ու բարի,
Անապական աղով Բանի,
Որ ինձ թողնես, ըստ առակի,
Հոգուս կյանք տուր մահվան ախտից,
Ինչպես նըրանց՝ այն երեքին,
Մաքրիր ինձնից բորը մահվան,
Հանց ասորի Նեեմանի,
Ինձ վեր հանիր տապարի պես,
Կենաց կարթիդ ձողով ասես,
Բացվեն բիբերն հոգուս աչքի,
Հանց պատանուն՝ իմանալին:
Թող, հարվածով այս աղեղի
Ջարկեմ սիրտը Բելիարի,
Ինչպես և նա վերջին պահին
Նետով զարկեց իր արքային,
Ինձ էլ տուր Դու արիություն՝
Նետահարեմ իմ թշնամուն,
Թող ազատվեմ աղբից նրա,
Որոգայթից չար որսորդի.
Հանց օրինակ, պետք է հիշեմ
Գերությունը Բաբելոնի,
Երբ որ Ուխտը սուրբ Օրենքի,
Որ դըրեցիր նըրանց անձին,
Պատժով լըցրիր ծոցը նըրանց,
Վըրեժի օրը գայթեցին
Ըսպառնական այն խոսքերով,
Որ Մովսեսին ավանդվեցին:
Քանզի արքան քաղդեացի
Մըտավ երկիրն Հրեաստանի,
Երուսաղեմը տապալեց,
Որդիներին նըրա մորթեց,
Սուրբ տաճարը հրի մատնեց,
Սըրբությունները նա պըղծեց,
Եվ Սիոնի երգիչներին
Ծանըր գերության վարեցին,
Ուռիներից որ կախեցին
Երգարանները տաճարի
Եվ անդադար նըստան լացին

Միշտ առ գետով Բաբիլովնին:
Նոյնպէս և զիմ քաղաքս առին
Խառնակութիւնք ախտասիրին,
Անմարմնական զօրքըն չարին,
Որք ի Բաբէլ նըշանակին:
Զմասունս երիս տիրականին
Ախտից սըրով խողխողեցին,
Եւ ըզքառեակ ծընունդ սորին,
Որով մասունք իւր զարդարին,
Ի գերութիւն տարագրեցին
Յօտար աշխարհ այլասեռին.
ՄԱՏ. Ը, 30-34 Ի յարածել զերամ խոզին
ՄԱՐ. Ե, 12-16 Յայսմ աշխարհի ագարակին:
Եւ ի տաճարս աստուածային,
Յորում բնակեաց Քո Սուրբ Հոգին,
Ըզհուր մեղաց բորբոքեցին,
Կիզմամբ ախտից տոչորեցին:
Զայգիս տընկեալ աջով Քոյին
Եւ մըշակեալ Հօր Քո ձեռին,
Զցանկըն քակեալ յատակեցին,
Կըթեն անցորդք ճանապարհին:
Այլ որ զգերեալսըն Սիօնին
Դարձուցեր յետս ի հայրենին,
Շինել զտաճարըն վերըստին
Պայծառ և շքեղ քան զառաջին,
Դարձո՛ և զիմըս գերութիւն՝
Որպէս և զուխսըն հարաւային՝
ՍԱՂ. ՃԻԵ (ՃԻԶ).4 Յօտարոտի երկրէ չարին,
Զմիտըս գերեալըս գերողին.
Որք ի յերթալն իմ ողբային
Մինչ զսերմանսըն տանէին,
ՍԱՂ. ՃԻԵ Դարձեալ ի գալն ուրախասցին՝
(ՃԻԶ). 6 Յարդիւնաբեր հունձս որային:
Հատո՛ դրացեացս եօթանեքկին
Ընդ բիւր չարեացն ի ծոց նոցին,
Եւ սպանելոյս շահեա՛ զհոգին,
Խընդրեա՛ զարիւնըն, զոր հեղին:
Այլև դըստեր Բաբիլովնին
Թըշուառական և դըժնեին

Բաբելոնի գետեզերքին,
Այդպես քաղաքն էլ իմ առավ
Խառնակությունը չարասերի,
Անմարմին զորքն ախտասերի,
Որ Նըշանն են Բաբելոնի:
Երեք մասերը տիրական
Ախտի սըրով խողխողեցին:
Եվ քառյակ ծընունդը սըրանց,
Որով մասերն են զարդարված,
Տարագրեցին ողջ գերության,
Օտար երկիր՝ այլ ազգության,
Հանց խոզի ջոկն է արածում
Այս աշխարհի ագարակում:
Եվ տաճարում աստվածային,
Ուր բնակվում էր Սուրբ Հոգին,
Հուրը մեղքի բորբոքեցին,
Ախտի կիզմամբ տոչորվեցին:
Այգին էր Քո աջով տընկված
Եվ Քո Հոր ձեռքով մըշակված.
Բայց ցանկապատն ավերեցին,
Անցորդները թալանեցին.
Բայց Սիոնի գերյալներին
Դարձրիր երկիրը հայրենի,
Որ տաճարը նորոգեին
Պայծառ ու ճոխ, քան առաջինն.
Ինձ էլ դարձրու գերությունից,
Ինչպես գետերն հարավային:
Օտարոտի երկրում չարի
Միտքըս գերված է գերողին,
Եվ երթալըս էին ողբում,
Երբ սերմերս էին տանում,
Ապա՝ դարձիս ուրախանում
Արդյունավոր հունձով շեղջիս:
Յոթնապատիկ զարկիր կըրկին
Դրացիներիս, որոնց ծոցում
Բյուր չարիքներ են բընակվում,
Իսկ սպանվածիս հոգին շահիր,
Հեղած արյունը պահանջիր,
Իսկ դըստերը Բաբելոնի
Թըշվառացրու, դարձրու դըժնի,

Հատո՛ փոխան գործոց նոցին,
Զոր ի սկզբանն ինձ արարին:
Հըզօր, տո՛ւր ինձ լինել ուժգին
Եւ ի դիմի հարուլ չարին,
Առնուլ զոտից մանկանց նորին
Եւ հարկանել զկարծըր վիմին.
Լըսել ըզբան մարգարէին
Ընդդէմ մահու բըռնաւորին,
Ո՛ւր, ասէ, մահ, Քո յաղթութիւն
ՈՎՍԷ ԺԳ, 14 Կամ ո՛ւր, դըժոխք, խայթոց քոյին:
Ա ԿՈՐՆ. ԺԵ, 55 Մինչ դարձուսցես առ հայրենին,
Ուստի անկաւ մարդն առաջին,
Ի փափկութեան ադին դրախտին
Յանմահական և յերկնային:
ԵՐ. Ա, 5 Հայցմամբ մաքուր յորովայնէ
Երեմիայի մարգարէին
Եւ քրովբէից տեսանողին
ԵՋԵ. Ժ ՋՏէրդ ի վերայ Քոբար գետին.
ԵՋԵ. Ա Որք ընդ գերեալսն ընթանային
Որպէս հովիւ ըզկնի հօտին,
Ջի մի յանգիւտ մոլորիցին
Եւ գահավէժ հոգւով լիցին:
Նա և յոգունց համանմանից,
Որք յայնմ էին ժամանակին,
Քոյին Հոգւով տեսանէին
Եւ զապագայսըն պատմէին.
Յովսեայ բարւոյ սերմանողին,
Եւ Ամովսայ քարոզողին.
ՄԻՔԱ Ե, Զ Միքիայ ըզծնունդ Քո տեսնողին
Ի Բեթլեհէմ տուն Եփրատին.
Եւ Յովելեայ ողբերգակին,
Որ ի դէմս իմ վայ տայր անձին.
Եւ Աբդիու հոգեկրողին,
Ընդ որս Նաւում եղկիսացին:
ԱՄԲ. Բ Ամբակումայ զարմանալւոյն
Պահօք ելող բարձր ի վիմին,
Այնմ որ զվարսիցըն հրեշտակին
Առեալ բերէր ճաշ ի գըբին.
Սոփոնիայ հրատարակին
Եւ Անգէի քարոզ բանին:

Տեղը բոլոր չար գործերի,
Որ նախապես գըլխիս բերին.
Հըզոր, թող ես լինեմ ուժգին
Եվ դիմադարձ զարկեմ չարին,
Նըրա մանկանց ոտքերն առնեմ՝
Կարծր ու կոպիտ վեմին զարկեմ,
Լըսեմ խոսքը մարգարեի,
Ընդդեմ մահվան-բըռնավորի.
Ո՜ւր է խայթըդ, դըժոխք, գոչեմ,
Կամ՝ ո՞ւր է, մա՛հ, քո հաղթություն:
Մինչև դարձնես դեպ հայրենին,
Ուր ընկավ մարդըն առաջին
Փառքից եդեմի դըրախտի
Անմահական և երկնային:
Հայցմամբ մաքուր հոգու խորքի
Երեմիա մարգարեի,
Տիրոջն ու քերովբեներին
Քոբարի վրա տեսնողին,
Որը մեջն էր գերիների,
Որպես հովիվ գըլխին հոտի,
Որ էլ անհույս չըմոլորվեն,
Գահավեժ հոգով չըլինեն:
Նաև մարդկանց համանըման,
Որոնք կային այն ժամանակ
Եվ Քո հոգով էին տեսնում,
Ապագան էին մեզ պատմում,
Բարիք սերմանող Հովսեի,
Նաև Ամովս քարոզողի,
Միքիայի՝ ծնունդըդ տեսնողի
Բեթլեհեմում՝ տանն եփրատի,
Ապա Հովել ողբերգակի,
Իմ տեղ վայ ասող իր անձին,
Եվ Աբդիա հոգեկրողի,
Նաև Նաում Եղկիսացու,
Զարմանալի Ամբակումի,
Պահքով վեմի ծայրն ելնողի,
Նա, որ վարսով հըրեշտակի
Բերեց ճաշը մոտն իր փոսի,
Եվ Սոփոնիա մունետիկի,
Անգեի՝ Քո խոսքն ասողի,

Եւ Յովնանու որսոյ կիտին,
Եւ Նինուէի մեծ քարոզին:
Ջիս վերածեա՛, Տէր, ընդ նըմին
Յորովայնէ չար վիշապին,
Հայցմամբ Քոյոյ օրինակին
Երեքօրեայ թաղմամբ յերկրին:
Ջաքարիայ տեսանողին
ՋԱՔ. Դ Եւ եօթնալոյս աշտանակին,
Այն, որ նըստեալ յաւանակին
ՋԱՔ. Թ, 9... ՋՔեզ աւետէր նոր Սիօնին:
ԺԲ Մաղաքիայ՝ որ է վերջին
Ի մարգարէսն այն առաջին,
Անուանակիր սուրբ հրեշտակին
Եւ համատիպ գեղոյ նորին:
ԴԱՆԻ. Ա Երից մանկանց Բաբիլովնին,
Աշակերտաց Դանիէլին,
Անանիայ, Ազարէին,
Մաքուր մանկան Միսայէլին:
Այնք, որ ի հուրն անկան հնոցին,
Ջի պատկերին ոչ զոհեցին.
Յորում իջեր Տէր առ նոսին,
Չորրորդ եղեր ընդ երրորդին.
Փոխարկեցեր զբնութիւն հրային
Ի մեղմագոյն ցօղ անձրևին,
Որ բարձրանայր չորրեակ տասին
Ինըն կանգուն յաւելուածին.
Ի յօրինակ եօթանց եօթին,
Այս կենցաղոյս եօթանց դարին,
Յորում զօրէ հուր ախտային
Վառեալ փըչմամբ մեղսասիրին,
Այն, որ յաւուր ութերորդին
Բառնի ի սպառ գալով Քոյին,
Եւ մեղաւորք մեղօք ջընջին
Եւ ամբարիշտք ոչ գըտանին:
Բայց ես մեղօք յայժմուս կիզիմ
Իբր զվառող այնըր հրատին,
Եւ բարձրանայ յիս բոց չարին
Յոյժ առաւել, քան ըզհնոցին.
Փըրկեա և զիս, Տէր, ընդ նոսին
Յայրեցմանէ չար խորհըրդին,

Նաև կետի որս Հովնանի,
Նինեացվոց ճարտասանի,
Ինձ էլ հանիր, Տեր, նըրա պես
Որովայնից չար վիշապի,
Օրինակով հենց Քո տըված,
երբ երեք օր եղար թաղված:
Նըման Զաքարիա տեսնողին,
Որ յոթնալույս աշտանակից
Քեզ էր ավետում Նոր Սիոնում,
Ուր ավանակ նըստեցիր Դու,
Մաղաքիայի, վերջինն է նա
Մարգարեներից առաջին,
Անվանակիր հըրեշտակի
Եվ համատիպ նըրա տեսքի,
Երեք մանկանց Բաբելոնի,
Աշակերտներին Դանիելի —
Անանիայի, Ազարիայի,
Մաքուր մանկան Միսայելի,
Նըրանց, որ հուրն ընկան հնոցի,
Քանզի կուռքին զոհ չբերին,
Եվ երբ Տերն իջավ նրանց մոտ,
Երրորդի հետ եղավ չորրորդ,
Եվ բընությունը հըրային
Դարձրեց մեղմ ցող անձրևային,
Որ ելնում էր քառասուն կանգուն,
Ինն էլ՝ վըրան ավելանում,
Հանց օրինակ յոթով յոթի՝
Մեր այս կյանքի յոթ դարերին,
Ուր հըզոր է հուրն ախտային,
Վառված՝ փըչմամբ մեղսասերի,
Որ ութերորդ օրն է մարում
Եվ գալըստյամբ Քո վերանում,
Մեղավորներն՝ մեղքով ջընջվում,
Ամբարիշտներն՝ անհետանում,
Բայց ես այժմ եմ մեղքով այրվում,
Ինչպես դըժոխքի հըրերում,
Ներսըս բոցն է ելնում չարի
Հույժ առավել, քան հնոցի,
Փրկիր նրանց հետ, Տեր, և ինձ
Չար խորհըրդի կրակներից,

Ի կիզմանէ անբնականին
Եւ ի հրատից բնութեան ախտին:
Ցօղ Քո իջցէ, երբ ի հնոցին,
Անձրև կենացդ առաւօտին
ԶԻմ շիջուսցէ ըզբոց տապին,
Փոխարկեսցէ յամպ ցօղագին,
Եւ զանվախճան հուր գեհենին՝
Զոր ժառանգեն հրեշտակք չարին,
Ըզդառնագոյնն և զխաւարին,
Որ է ծընունդ մեղաց ախտին,
Զոր վառեցի անձամբ անձին
Բորբոքեցի փըչմամբ չարին,
Շիջո յինէն հայցմամբ նոցին,
Արժանացո լուսոյդ վերին,
Պաղատանօք մարգարէին
Ի մանկութեան տեսանողին,
Դանիէլի հոգւով ծերին,
Մարմնով ծերոց կըշտամբողին,
Զանյայտ տեսիլսըն մեկնողին
Բաբիլացւոց մեծ արքային,
Զվէմըն հատեալ առանց ձեռին
Զառ ի Կուսէն Քո ըզմարմին.
Եւ ըզգալըստեան Քո օր վերջին,
Որպէս տեսեալ ծանուցողին,
Զհայր Հին աւուրց անւանողին
Եւ զՔեզ ընդ ամպըս տեսողին,
Եղիազար Մակաբէին՝
Ինքնաբուեր քահանային,
Եւ ըստ հոգւոյ որդւոց նորին
Եօթն եղբարց և մօր նոցին.
Որք ի վերայ հարցն Օրինին
Մարմնով մեռան և ոչ լուծին,
Եւ զԱնտիոքն երևելին
Եւ զանմարմինն անարգեցին.
Զիս ազատեա՛ հայցմամբ նոցին
Ի բըռնութեանց Բելիարին,
Չարչարակցօք Քո առաջին,
Գուշակողաց զխորհուրդ խաչին:

ՊԱՆԻ. Է

և ՄԱԿ.

Անբնական կիզումներից,
Անձիս ախտի մորմոքներից,
Քո ցողն ինձ տուր այս հնոցում,
Կենաց անձրևըդ առավոտի,
Որ մեղմացնի բոցըս տապի
Եվ վերածի ցողի ամպի:
Անվախճան հուրը գեհենի,
Որ ժառանգում են խավարի
Հրեշտակները դառն ու չարի,
Որ ծընունդ է մեղքի ախտի
Եվ որ ինքըս անձամբ վառի,
Բորբոքեցի փըչմամբ չարի,
Հանգցրու իմ մեջ խնդրով նըրանց,
Արժանացրու վերին լույսիդ
Պաղատանքով մարգարեիդ,
Մանկությունից տեսանողի
Եվ հոգով ծեր Դանիելի,
Մարմնով ծերերին կըշտամբողի,
Բաբելոնի մեծ արքայի
Անհայտ տեսիլքը մեկնողի,
Առանց ձեռքի հատված վեմի,
Կույսից առած Քո մարմընի,
Քո գալըստյան վերջին օրվա
Լույսը տեսնող-ծանուցողի,
Հորն Հինավուրց անվանողի
Եվ Քեզ ամպերում տեսնողի:
Եվ Եղիազար Մակաբեի
Ինքնանըվեր քահանայի,
Իր հոգևոր որդիների,
Այն մոր և յոթ եղբայրների,
Որ Հայրերի Օրենքը Հին
Թեև մեռան, բայց պահեցին,
Երևելի Անտիոքին
Եվ կուռքերը նախատեցին:
Բելիարի քըրնությունից
Ինձ ազատիր հայցմամբ նրանց՝
Քո առաջ տառապողների,
Խաչի խորհուրդը տեսնողների: